

ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ
TEXTS AND DOCUMENTS
ТЕКСТЫ И ДОКУМЕНТЫ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ*

DOI:10.57155/JQGG1300

ԺԳ ԴԱՐԻ ՀԻՇՎՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՏԱՍԵՉՈՐՍ ՁԵՌԱԳՐԻՑ
(Լրացում ժԳ դարի հիշատակարանների ժողովածուին)

Բանալի բառեր՝ Ձեռագիր, հիշատակարան, գրիչ, Հաղբատ, Գլաձոր, Կիլիկիա, Սիս, Դրազարկ, Մլիճ, Կոռիկոս:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններն անգնահատելի սկզբնաղբյուրներ են, որոնք տեղեկություններ են պարունակում ձեռագրերի ստեղծման տեղի, ժամանակի, գրչի, պատվիրատուի և այլոց մասին, ինչպես և լրացուցիչ պատմական ու գնահատան այլ տվյալներ, որոնք միանգամայն արժանահավատ են, քանի որ գրի են առնված ժամանակակից և ականատես մարդկանց ձեռքով: Հայերեն ձեռագրերի առանձնահատկություններից է ինչպես գրչության ժամանակի, այնպես էլ հետագայի (ձեռագիրը ձեռք բերողների, նորոգողների և այլոց) հիշատակարանների շատ մեծ թիվը, որոնք գրվել են դարերի ընթացքում՝ հազարավոր մարդկանց ձեռքով: Հիշատակարանները հսկայական աղբյուրագիտական նյութ են պարունակում, միաժամանակ, վերջին տասնամյակներին կատարված ուսումնասիրությունները բացահայտում են դրանց ոչ միայն պատմական, այլև ընդհանուր մշակութային, լեզվաբանական և այլ նոր շերտերը¹:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.դ., karenmatevosian@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 16 օգոստոսի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 11 նոյեմբերի, 2025:

¹ Այս մասին տե՛ս Հ. Բախչինյան, Հայկական ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ժԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988 (առաջաբան՝ «Հայերեն ձեռագրերի հիշատակարանները» էջ Ե-ԻԵ), Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, Լ. Հովսեփյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, 1997, Կ. Մաթևոսյան, «Հայ մանրանկարիչների յիշատակարանները», Սիոն (Երուսաղեմ), 1997, հուլիս-դեկտեմբեր, էջ 312-

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների գրուվյան առաջին ամենահարուստ դարաշրջանը ժԳ դարն է: Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իր կազմած «Յիշատակարանք ձեռագրաց» (Անթիլիաս, 1951) ժողովածուի մեջ՝ սկսելով հայտնի վաղագույն հիշատակարաններից, հրատարակել է նաև ժԳ դարի 1201-1250 թվականներն ընդգրկող շուրջ 200 ձեռագրի հիշատակարան: Դրանց մի մասը լրացնելով և այդ դարի հիշատակարանները ժամանակագրորեն ամբողջացնելով, Արտաշես Մաթևոսյանը առանձին հատորով հրատարակել է հազարից ավելի հիշատակարան՝ 832 ձեռագրից²: Այդ հատորից դուրս մնացած մի քանի հիշատակարան, որպես հավելված, նա զետեղել է 1988-ին հրատարակած Ե-ԺԲ դդ. հիշատակարանների ժողովածուի վերջում³:

Դրան հաջորդած տարիներին ի հայտ են եկել Ս. Էջմիածնի ձեռք բերած նոր ձեռագրերի, Երուսաղեմի և Վենետիկի ձեռագրացուցակների նոր հատորների և այլ հրատարակուվածությունների պարունակած ժԳ դարի հիշատակարաններ, որոնք, բնականաբար, դուրս են մնացել վերը նշված հատորներից: Ընդհանրապես, հիշատակարանների հրատարակուվածությունը շարունակական աշխատանք է, քանի որ միշտ էլ հնարավոր է հայտնաբերվեն հիշատակարան պարունակող ձեռագրեր, հրատարակվեն նոր ձեռագրացուցակներ ու այլ սկզբնաղբյուրներ և կամ ի հայտ գան նախորդ հրատարակիչների ուշադրուվածությունից վրիպած հիշատակարաններ:

Ստորև ներկայացնում ենք ժԳ դարի հիշատակարանների վերը նշված ծավալուն հատորից դուրս մնացած (երկուսը՝ դրանում հատվածաբար հրատարակված) մի շարք հիշատակարաններ, որոնք քաղված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրերից և տարբեր հրատարակուվածություններից: Բոլոր հիշատակարաններն էլ թվակիր են (1203, 1221, 1222, 1223 (2 հիշատակարան), 1237, 1240, 1252, 1285, 1292, 1293 (2 հիշատակարան), 1294, 1297, 1298 թվականների): Դրանք քաղված են 14 մատյանից և վերաբերում են գրչուվյան ժամանակին, նաև առկա են մեկ հետագայի՝ նորոգման (1293 թ.) և մեկ անթվական՝ նույն դարի, հետագայի ստացողի հիշատակարաններ, ինչպես նաև մի շարք մանր հիշատակագրուվածություններ (ընդհանուր՝ 47 հիշատակարանային միավոր):

326. Խ. Հարությունյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, Մատենադարանի հրատ., 2019, նույնի՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն (Թ.ժե դարեր), գիրք Ա, Երևան, Մատենադարանի հրատ., 2022, և այլն:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, 988 էջ:

³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 335-340:

Ներկայացվող ձեռագրերի գերակշիռ մասը Կիլիկիայից է (10 մատյան) և հիշատակարանները, բնականաբար, կարևոր սկզբնաղբյուր են Կիլիկյան Հայաստանի պատմության համար: Դրանցում հիշատակվում են աշխարհիկ և եկեղեցական բազմաթիվ գործիչներ, վանքերի ու բնակավայրերի անուններ, որոշ ուշագրավ պատմական դեպքեր և այլն:

Թեև հիշատակարանների հիմնական մասը հրատարակված է⁴, սակայն դրանք ցրված են տարբեր գրքերի էջերում և այստեղ ի մի բերվելով կարող են դյուրացնել տվյալ դարաշրջանով զբաղվող հետազոտողների աշխատանքը: Իսկ հետագայում դրանք պետք է ընդգրկվեն հայերեն ձեռագրերի հիշատակարանների համահավաք թվային շտեմարանում, որի ստեղծումը վաղուց արդեն հասունացել է:

Հիշատակարանները բերում ենք ըստ ԺԳ դարի հատորի սկզբունքների: Գլխագիր թվատառերից հետո փակագծում նշում ենք համապատասխան համարժեքը՝ արաբական թվանշաններով: Տեքստի մեջ էջերի հաջորդականութունը նշում ենք փակագծում: Հիշատակարանների անընթեռնելի, ջնջված, անավարտ մնացած մասերը նշում ենք երեք թեք գծով///: Դժվար ընթեռնելի բառի կամ նախադասության վերականգնված տարբերակը դնում ենք քառակուսի փակագծում՝ []: Պահպանում ենք բնագրի ուղղագրությունը, իսկ պատվագրված բառերն ու համառոտագրությունները բացում ենք⁵:

⁴ Հրատարակված հիշատակարանների մի մասում, որոնց լուսանկարները մենք ունեցել ենք, կատարվել են որոշ նշագրումներ և սրբագրումներ:

⁵ Ձեռագրացուցակներից բաղկած հիշատակարաններում պահպանում ենք տվյալ հրատարակությունների ուղղագրությունը: Մասնավորապես, դրանցում հիմնականում երկտառ «եւ» է օգտագործված և չգիտենք, թե բուն ձեռագրում ինչպես է եղել, ամենայն հավանականությամբ միատառ է եղել, քանի որ դա հատուկ է ԺԳ դարին և մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում (կամ մեր ունեցած թվային պատկերներում) ամենուր այդպես է:

ԲՆԱԳԻՐ

1

ՈՄԲ

1203

ՆԱՆԱ ԱՍՈՐԻ, ՄԵԿՆՈՒԹԻԻՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԻԵՏԱՐԱՆԻ

Ս. էջմիածին⁶Գրիչ՝ **Գրիգոր**
Վայր՝ **Արիգին (Կիլիկիա)**

ա

275բ Փառք երից անձնատրուքեանց, անուանց և դիմացն, և միոյ Աստուածութեանն՝ Հար և Որդոյ և Հոգոյն Սրբոյ, յափտեանս յափտենից, որ ետ զարութիւն տկարութեան իմոյ հասանել ի վերջին գիծ բացայայտութեան աստուածաբան և հոգիաբոլիս մատենի աննաոիցն պատմողի և անհասանելեացն վիպասանի ի Հարէ բանին ծնընդեան և Հոգոյն երոդութեան անհատաբար և էպպէս, և ի մարմին պարագրելոյ, որ ի Հարէ է անմարմին և կրիցն փրկագործ, որ ըստ մեզ տնաւրէնութեամբ երիցս երանեալ սիրեցելոյ աշակերտին՝ որդոյն որոտման մեծին Յոհաննոս, որ ի լանջսն բազմեցաւ բոցոյն, յորմէ կիզան ախտիցն հոյլք և ի ստեանց իմանալեաց ձգեալ զկաթն հաննարոյ, մանաւանդ ի տուն եղեալ գինոյն և հանդէպ աստուածայինն հնձանի զբերան մտացն եղեալ արբ և արբեցաւ և արտաբոյ ինքն ինքեան եղեալ զգերահոչակ և զբազմեանեանս զայս զհրասեռիցն անհպելի արձակեաց զձայն, զոր երկնից ընկալեալ հիացաւ աւոյ և սրբեցաւ երկրի և զտիրապետսն ընծայեաց հաւատոյ բան, զոր ընդարձակեալ զխորհս անհուն աստուածաբանական իմաստից և կենսաւանդ վարդապետութեան և փրկագործ տնտեսութեան իմոյն Յիսուսի է **Նանայ** սարկաւագի և հոգելից վարդ]ապետի ի խրատ և յաւուտ, (276ա)ոյց սիրելի է զիրն և որ զինքեամբ լճանե[ն] մաքրապէս և անախտաբար ինքեան միայն /// ի ծանրութենէ թերևանալ նիւթոյս [յառաջ]ընթաց կարապետի ճանապարհին կենալց սլ]ացմամբ կամաց և խաչի բեռամբ զհետ ընթանալ:

Որոյ բաղձանամ սրտի փափագեալ վերջինքս՝ յուսումնասէրս և թերավարժ յիմաստս **Գրիգոր և Բասիլ**, ստացաք զսա երկամ ձեռնին ոչ սուղ աշխատութեամբ, յորում պանդխտանայաքս ի հոչակաւոր եղբայրանոցս՝ **Արի-**

⁶ Մայր Աթոռի ձեռք բերած նոր ձեռագրերից է, որն առայժմ թվահամար չունի: Նյութը մեզ արամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Ս. էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն Տ. Ասողիկ արդ. Կարապետյանին և Մատենադարանի գիտաշխատող Դավիթ Ղազարյանին, որը նկարագրել է ձեռագիրը, ընդօրինակել հիշատակարանը և վերծանել ծածկագիրը:

Անֆանակի, Հար պա(տ)նառի ամենայնի,
 և Որդո նորա միածնի
 և Հոգոյ նորայ բաշխողի⁸ անընդմիջելի,
 զի երբ Հայր և Որդի անդ տեսանի,
 և Հոգին Սուրբ երևի, երիսն ի մի կամֆ տեսանի:
 Եւ մին յերիս անձինս բաժանի,
 որպէս աղբիւր ծով և գետֆ բաժանի,
 և բնութիւնֆ միատրի:
 Եւ որպէս բան, միտֆ և հոգի ի մի նիւթ տեսանի:
 Եւ կամ Արարչին ընդ արարածոյս համաբատակի:
 Զի՞ զի արդար, բայց ոչ այս տիրապէս արինակի:
 զի՞ զի արդար անեղն ընդ եղականս համեմատի,
 Եւ կամ արարչին ընդ արարածոյս համաբատակի:
 Զի որպէս պատկեր առ կենդանի,
 կամ խաւար մերձ առ լուսի,
 սա պէս ամենայն արինակֆ ընդ Տեառն համեմատի,
 այլ որպէս ինքն կամի ծառայիցն իւրոց յայտանի,
 ըստ փայլատակման որ երագ անց[ն]ի:
 Եւ այս անմարմնոցն է ի մարմնի,
 և որ պայծառ զմիտսն ունի,
 և սրբութեան կենամֆ վարի
 և որչափ հոգով իւր սրբի,
 այնչափ զլոյսն յինքն ընդունի,
 ըստ հայ[ել]ոջ արինակի:
 Եւ արդ ես **Գրիգոր** գրիչս՝ ըստ Հայկազնի,
 եղբայր եղեալ մեծ իշխանի,
 և նշմարիտ բարեպաշտի,
 որո[յ] անուն **Փիլիպ** իւր հանաչի:
 Ի թուականութեանս **Տանս Թորգոմի**,
 որ էր :Ո: ընդ ի պթանասնի (1221):
 Ի թագաւորութեանս Հայոց **Լեւոնի**,
 յաշխարհիս **Կիլիկէի**,
 և ի հայրապետութեան տեառն **Յոհաննիսի**
 Հայոց կաթողիկոսի և վերադիտողի՝
 իմաստուն և հաննարեղ առաջնորդի:
 Իսկ թագաւորդ վերասացե[ա]լ :Բ: (2) ամով յառաջ

⁸ Ձեռագրում՝ «բողխողի»:

փոխի առ Քրիստոս՝ յոյսն իւր սիրելի,
 զի էր բարի և կրանատրաց յոյժ բաղձալի,
 և զի շէր նորա որդի, որ լինէր ժառանգ այսմ աշխարհի:
 Ապա աղջիկ մի իւր ցանկալի՝ տղա գոլով ևթն ամի,
 զոր եղ ժառանգ այսմ աթոռի:
 Եւ էր իշխան (278ա) մի իւր սիրելի,
 որոն անունն **Ատոմ** իւր նանաչի:
 Ազգաւ էր Հայկազնի,
 բայց հաւատովն Յոյն, ընդ ժողովոյն **Քաղկեդոնի**:
 Զնա եղ իւր պայլի և տեսուչ տղա[յ]ոյն, որ ասացի:
 Եւ զհայրապետն բաղձալի՝ հայր ըստ հոգեկանի,
 եւ զայլ իշխանսն, որ ընդ ձեռամբ նորին լինի:
 Զպայլն զայն սրով խո[ղ]խո[ղ]խեցին
 այլասեռ ազգն Հաշիշի,
 և էր աներ նորին պայլի,
 որոյ անունն **Վահրամ** իւր նանաչի:
 Դարձեալ հուրն այն բորբոքի,
 Զի զ**Ռոբէն** որ երկազգի՝
 Փռանկ⁹ և Հայկազնի,
 առեալ ածեն ի **Տարսն** **Կիլիկի**,
 [Զ]ի [տ]էր լիցի այսմ աշխարհի:
 Իսկ հայրապետն որ ասացի,
 զոր էր պահեալ Տեառն Յիսուսի
 վասն դառն այսմ ժամանակի,
 և զոմն իշխան ինքն մեծազգի,
 որ **Կոստանդին** անուն կոչի,
 և փեռորդի թագաւորի,
 իբրեւ լու[ա]ն գառումն **Տարսնի**,
 և զչար գործն այնմ իշխանի,
 և զիւր եղբարն **Ճաւալքնի**,
 զի նա **զՓիլն** յինքն ընդունի,
 գործէ զգործ ան[ար]իւնի,
 և գերի առե[ա]լ տանի
 զբազում կանայս և մանկտի,
 ասարելով զտուն և զտեղի այսմ աշխարհի,
 ուր և ձեռն իւր հասանի:

⁹ Զեռագրում՝ «Փռակն»:

Յայնժամ զար մեծ ժողովի,
 ի ձեռն իշխանին, որ ասացի,
 երթեալ ի դուռն **Տարսունի**,
 և յամենայն կողմանց նեղի
 և շարշարի ազգ **Քրիստոնէի**:
 Արդ, ի դառն այսմ ժամանակի,
 ցանկացող եղէ այսմ ծաղկազարդ բուրաստանի,
 որ հոգեղինաւ բոցով բորբոքի:
 Եւ մարգարէիցն և առաքելոցն,
 և սրբ[ոց] կուսանացն, և մարտիրոսացն
 տանաւ պայծառացի,
 և ծառ լի պտղովք երևի,
 և զոգիս լսողացն գործէ զուարթալի,
 զոր ցանկացա տանել զսա,
 ի սուրբ տեղիսն **Պետրոսի** և **Պաղոսի**,
 ի յիշատակի ինձ և իմոցն ամենայնի:
 Բայց գրեցաւ սա ի վանքս **Դրագարկի**,
 ի սուրբ և հոշակատր անապատի:
 Ընդ հովանեաւ Սրբո[յ] Աստուածածնի,
 և այլ սրբոցս, որ են ի մի տեղի,
 ի յառաջնորդութեան սորին տեառն **Յոհաննիսի**
 Հայոց կաթողիկոսի, որ էր բարի,
 սուրբ և ընտրեալ յամենայնի:
 Եւ ժողովեալ է աստ եղբարս ցանկալի,
 Իբրև հարիր ընդ յիսնեկի,
 որ միշտ խաւսին ընդ Յիսուսի,
 բազկատարած Տեառն առաջի,
 են բարեխաւս ցանկ աշխարհի:
 (278բ) Եկեղ[եց]ապան մի ի սոյն տեղի՝
Պետրոս անուն իւր հանաչի,
 որպէս ծնող ամենայնի,
 և տեսական զուարթալի,
 որ յարինակիս մեզ յաւժար լինի,
 որո Քրիստոս ողորմեսցի իւր և ծնողաց իւրոց:
 Երածը[շ]տապետ մի անուանի,
Վարդան անուն իւր երևի,
 Քրիստոս և իւր ողորմի:
Սարգիս հայր մեր ըստ հոգեկանի

և Քրիստոս նմա գիտեմ ողորմի:
 Ծեր մի բոցեղէն՝ **Քրիստոս[ա]տուր** անուն իւր երևի,
 և վարդապետ մի **Պետրոս** անուն իւր նանաչի,
 և Քրիստոս սոցին ողորմեսցի:
Յոնանէս վարդապետի, որ է ի յայս տեղի,
 և Քրիստոս իւր ողորմեսցի, ամ[էն]:

Քրիստոս Աստուած ի միսանգամ գալըստեանդ, յորժամ գաս միսանգամ նորոգել զստեղծուածս ձեռաց բոց, յիշեա՛ զ**Գրիգոր** մակնունն **Պատուական** կոչեցեալ, քո սուրբ առաքելոցն բարեխաւսութեամբ՝ Պետրոս և Պաղոսի, որոյ և բնակութիւնն իւր անդ կա[յ] ի դուռն սրբոցն: Եւ արդ, կա ի գիրս յայս արդիւնք նմա, դեկան ժԲ (12), որոյ կայր մաստ առ սուրբ եզնատուն **Խաչատուր**, յորժամ ցանկացող եղև սուրբ եղբայրս **Գրիգոր** գրել զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց: Զսակաւ ինչս զայս ետ ի գինս նիւթի և յաւժարեցոյց ձեռ[ն]արկել ի սուրբ կտակս յայս, և նմա ողորմեսցի Քրիստոս և իւր աղաթքն մեզ բարեխաւս և ամենայն հ[աւ]ատացելոց, ամէն:

Եւ արդ ես **Գրիգոր** տրուպ և տխմար և գցուց գրիչ սկ[սայ] յաւժար կամաւն Աստուծոյ և կատարեցի զսա յիշատակ ինձ և եղբարն իմ **Փիլիպին** և զոմակցին իւրոյ եւ ծնաւդացն մերոց, կենդանեաց և մեռելէց, և Քրիստոս Աստուած, որ զմեզ յիշատակի արժանի արասցէ, և զինքն յիշել աներեկ¹⁰ ատուն, յորժամ գործն յայտնի և բանն սպառի, և Քրիստոս Աստուած ամենի ողորմեսցի: Եւ յորժամ գլխատակարանս կա[րդաք]՝ **զԱւետիսն** և **զՍտեփանոս** հոգեղբայր մեր յիշեսցիք ի Քրիստոս, որ զայս բանս ծանուցին և զգիրս վանաւեցին ընդ Քրիստոսի և ընդ սուրբ առաքելոց[ն]:

Բ

201բ Քրիստոս Աստուած, քո հայրական փառաւոճ ողորմեա եղկելոյս **Գրիգորի**:

Գ

232բ Զմեղուցեալ գրող սորա յիշեսցիք ի Տէր:

դ

274ա Ով պատվ[ական] յիշեա՛:

¹⁰ Ձեռագրում՝ «աներեկ»:

Ե

278բ Ե[ս] **Գրիգոր** ապեղայս, որ գիրքս բերի և յետու գփոքր¹¹ յիշատակս վասն շին///տանս, գոր Աստուած պատրաստել էր ինձ, յիշատակ ինձ և ծնողաց իմ[ոց] և եղբ[աւր]...¹²:

3

Ա.Ի.ԵՏԱՐԱՆ

ՈՀԱ.

1222

Մասնավոր հավաքածու¹³Գրիչ և ստացող՝ **Յոհաննէս**
Վայր՝ **Սիս (Կիլիկիա)**

Ա

(1) Թուականութեանս Հայոց ՈՀԱ. (1222) ի հայրապետութեան Տ(եառ)ն **Կոստանդէա** և ի թագաւորութեան **Փիղիպոսի** նորընծայ արքայի, որ յայսմ ամի պսակեցաւ թագիւ և ընկալաւ զաթոռ թագաւորութեան **Տանս Հայոց**:

Գրեցաւ սուրբ և կենսակիր աւետարանս ձեռամբ **Յոհաննիսի** բազմամեղի ի քաղաքս **Սիս** ընդ հովանեաւ ս(ուր)բ տաճարիս, իր յանուն սրբուհոյն **Մարիմէի**, ի դառն և յանբարի ժամանակի, որ ի բազմանալ մեղաց մերոց շարժեալ անբարկանալին Աստուած ի բարկութիւն ի վերայ աշխարհիս մերոյ ազգի պատահարաւ և ցասմամբ՝ երբեմն մարախով, երբեմն կարկտիւ, երբեմն սովով և մահուամբ, երբեմն անպիտան անձրևաւ, զի կամ փակէ բարկութեամբ և կամ բանի խստութեամբ: Եւ ի վերայ այս ամենայնի ձեռամբ անարինաց խրատելով զմեզ, զի իբրև զգա(2)զանս արիւնարբոս յարձակեալ յաշխարհս մեր ի բազում տեղիս ասպատակելով, զբազումս ի սուր սուսերի մաշելով և զբազումս ի գերութիւն վարելով, գոր յուսամք ի մարդասիրութիւնն Աստուծո յոչ ըստ մեղաց մերոց առնել մեզ, և ոչ ըստ անարէնութեան հատուցանել:

¹¹ Ձեռագրում՝ «գփոքր»:

¹² Գրված է էջի ձախ լուսանցքում՝ թեմոսյամբ՝ վերից վար:

¹³ Հիշատակարանը հայտնաբերել, ուսումնասիրել և հրատարակել է Ներսես ավագ քահանա Ներսեսյան, «Կորստից փրկված մի ձեռագրի ողիսականը», *ԲՄ* 37, 2024, էջ 143-164, հիշատակարանը՝ էջ 149-152: Հրատարակության մեջ հիշատակարանը էջանշված չէ (ձեռագիրն ընդհանրապես թերթակալված չէ), սակայն լուսանարներում երևում է պայմանական էջակալում՝ 1-8, ուստի մենք այն պահպանում ենք, որպեսզի երևա հիշատակարանի էջերի հաշտորականությունը: Ձեռագիրը կազմողի 1293 թ. հիշատակարանը տե՛ս ստորև:

Ի շրջագայութեան թուականի մերոյ ՈԿԸ (1219) մեռաւ թագաւորն մեր **Ղեւովն** և եթող սուգ մեծագգիս հայոց, վասն զի ի ձեռն սորա նորոգեաց Աստուած զանկեալ և զկործանեալ թագաւորութիւն ազգիս մերոյ: Արդ զկընի վախճանի իւրոյ հաստատեաց սա յաթոռ թագաւորութեան իւրոյ զդուստր իւր, որոյ անուն **Զապէլ**, և կացոյց սպայապետս զմեծ իշխանն **Ատոմ** և **Գոստանաթին** ֆեռորդի իւր, և զամ մի խաղաղութեամբ կացեալ, և ապա ազգն անաւրէն **Մուկնէտֆ**, որ կոչին **Հաշիշիֆ**, սպանին իշխանն **Ատոմ** ի մէջ ֆաղաֆիս **Սիսոյ** և ապա (3) յերկուս բաժանեալ իշխաննն, մին կողմն ունելով ընդ ինքնեանս **զՌուբէն**, որ էր յազգէ թագաւորին, սոքա խաբէութիւն գործեալ ժողովեալ մտին ի **Տարսոն Կիլիկեա**, և ապա կաթողիկոսն **Յոհաննէս** և **Կոստանաթին** ֆեռորդի թագաւորին և այլ իշխաննն զաւրաժողով արարեալ գնացին ի **Տարսոն** և պաշարեցին զֆաղաֆն և յաւարի առեալ կալան զիշխանսն և ի բանդի եղին: Յայսմ ժամանակի ելին ազգք Հոովմայեցոց բազում զաւրաֆ և հեծելաֆ ի ֆաղաֆն **Աֆաիա**, եւ անտի նաւեցին յաշխարհն **Եգիպտացոց**, հասին ի վերայ ֆաղաֆին, որ այժմ կոչի **Տիմիսա** և պաշարեցին զնա և անդ կացեալ զամս երկուս բազում ֆաջութիւնս և արիութիւնս արարեալ առին զֆաղաֆն, և ի սուր սուսերի մաշեցին զամենեսեան: Ապա աշխարհաժողով արարեալ անաւրէն ազգն **Իսմայելացոց**, եկեալ բան(4)¹⁴ակեցան ընդդէմ ֆրիստովնէիցն, առաֆելով առ նոսա պատգամաւորս, խոստանային ինչս բազումս, դարձուցանել զֆաղաֆն Ս(ուր)բ (**Երուսաղ**)**էմ**, վերստին նորոգմամբ շինուածոյ, վասն զի իսպառ կործանեալ էին զնա և զամրոցս նորա ըստ հրամանի Փրկչին թե՛ մի մնասցէ այդր «ֆար ի վերայ որ ոչ ֆակտեսցի»¹⁵, վասն զի ազգն ֆրիստովնէից վասն սուրբ գերեզմանին ելեալ էին ի պատերազմն: Եւ նոքա ոչ հաւանեալ այսորիկ և ոչ տեղի տուեալ սիրոյ ամենևին, այլ խստութեամբ և հպարտութեամբ պատասխանեալ զնոսա, պարծելով ի զաւրս իւրեանց և ի ֆաշամարտիկ պատերազմողս, ելին ընդդէմ նոցա ի պատերազմ և զառաջինն յաղթեցին նոցա և ֆախստական արարին: Այլ ազգն **Քանանացոցն**, որ են խորագէտֆ իբրև զաւս, հնարեցան վասն նոցա և տեղի տուեալ գտին զնոսա ի կղզի ինչ առ ափն գետոյն մեծի (5) և բացեալ զգնացս ջուրցն, ֆանգի հասեալ էր ժամ ելանելոյ գետին յարբուցանելոյ զանդաստանս երկրին, և եղև այս ի ժամ գիշերի. իբրև եղև առաւատոս, էին նոքա ի մէջ ջուրցն, և ոչ գոյր նոցա տեղի զերծանելոյ ի ջուրցն, և կացեալ անդ ի մէջ

¹⁴ Այս էջի ստորին լուսանցումը դրված է ձեռագրի ԼԶ (36-րդ) պրականիշը:

¹⁵ Մարկ. ԺԳ 2:

ջրոցն զաւուրս երկուս կամ երիս. բազումք ի նոցանէ մեռան ի սաստկութենէ ջրոցն, և ապա թագաւորն և իշխանն ակամայ կամամ եկին ի հնազանդութիւն անաւրինացն, եղին դաշինս երդմամբ և պայման խաղաղութեան և դարձուցին ի նոսա զփաղափն իւրեանց և ինքեանք ցրուեցան իւրաքանչիւր յարկս իւրեանց: Եւ այս եղև սուգ մեծ հաւատացելոցն ի Ք(րիստոս)ս և ուրախութիւն մեծ անհաւատիցն:

Ի սույն աւուրս եհաս ի լսելիս մեր համբաւ իմն սաստիկ խոովութեան և դողման, զի եկեալ հասին ի կողմանս արևելից (6) յաշխարհն **Պարսից** ազգ մի խուժադոժ, շաղղակերֆ, իբրև զգազանս արիւնարբուս, որ բնաւ ոչ նանաչեն զԱստուած, սաստիկ զաւրաւ և հեծելաւ և կոտորեալ զգաւրս **Պարսից** և զփաղափս մեծամեծս ի հիմանէ տապալեալ կործանեցին. և ապա անտի դիմեալ գնացին յաշխարհն **Քաբելացոց**, և այնպէս և զնոսա յամենայն կողմանց պաշարեալ փարայատակ կործանեցին, և կէտք ի զաւրաց նոցա եկին յաշխարհն **Վրաց**, և լուեալ իշխանք աշխարհին, սակաւ զաւրաւ ելին ընդդէմ նոցա ի պատերազմ և ոչ կարացեալ զդէմ ունել անաւրինացն, փախստական եղեն և անկան յամրոցս իւրեանց, և նոքա ասպատակեալ յաշխարհն, զերեցին և աւարեցին զբազում տեղիս: Եւ ապա թագաւորն ի հոգս և ի տրտմութիւն անկեալ՝ առաքեաց ընդ ամենայն սահմանս տէրութեան իւրոյ, և (7) հրաման ետ առ հասարակ ժողովել զաւրաց իւրոց: Առաքեաց և յայլ թագաւորս, խնդրելով ազնութիւն հեծելաց. և այսպէս աշխարհաժողով արարեալ, դիմեցին ի վերայ նոցա ի պատերազմ, և նոքա երկուցեալ փախստական եղեն, գնացին խառնեցան յայլ զաւրս իւրեանց ի **Քաբելայումն**, որ կոչի **Պաղտատ**, և կացեալ անդ ժամանակս ինչ, յաւարի առին զաշխարհն: Եւ ապա անտի դիմեալ գնացին յաշխարհն **Ռուսաց**, և այնպէս և զնոսա յաղթահարեալ պատերազմաւ: Արդ այսպիսի արիւնակաւ շրջելով սոքա ի վերայ երկրի, իբրև զգազանս արիւնարբուս, անողորմ բարով՝ ոչ խնայելով ամենևին ո՛չ յարս և ո՛չ ի կանայս, ո՛չ ի ծերս և ո՛չ ի մանկունս՝ դողայ աշխարհ ամենայն յահէ և երկիւղէ նոցա. զոր Տէր Յիսուս սատակեցէ զնոսա հոգով բերանոյ իւրոյ:

(8) Արդ, ո՛վ փրիստոսասէր հարֆ և նզնազգեաց կրանաւորֆ և առաքելագումար դասֆ ֆահանայից, յորժամ վայելէք ի ֆաղցրանաշակ եղեմատունկ վտակաց ֆառառաջեայ հոսանաց կենդանական ա(ստուա)ծախասաւ ատետարանական բանիցս, մանաւանդ յորժամ բառնայֆ զսա ի ժամ սոսկալի պատարագին, յորժամ խաղան ի վերուստ յողջոյն և զաւրֆ հրեշտակաց,

յայնժամ նովին սուրբ անտարանաս և միջնորդական հրաշիւք կենարար սուրբ պատարագին, յիշեսջի՛ք գաշխատող սորին **զՅոհանէս** բազմամեղ գրիչ յաղապս ձեռ՝ ողորմութիւն գտանել ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Յիշել աղաչեմ և **զԲասիլ** հայր հոգևոր զդաստիարակն իմ ի Քրիստոս և **զԳրիգոր** անհաս գրիչ և զծնաւոսն իմ ըստ մարմնոյ, և որք յիշէֆ, և դոք յիշեալ լիջիք ի Տէր:

Բ

Մատթեոսի ավետարանի վերջում

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հար և Որդոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաիտեան յաիտենից ամէն:

Որք ընթեռնոք և լուսատրիք աստուածային սուրբ մատենից, ստացող սորա և զգրողս **Յոհանէս** ամենամեղ ոգի յիշեսջիք ի Քրիստոս, ո՛վ մանկունք նոր Սիոնի: Եւ որք յիշէֆ, և դոք յիշեալ լիջիք յողորմութիւնն Աստուծոյ, որ է արհնեալ յաիտեանս, ամէն, ամէն:

Գ

Մարկոսի ավետարանի վերջում

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հար և որդոյ և սուրբ հոգւոյն այժմ և միշտ և յաիտեանս յաիտենից:

Ստացող սուրբ անտարանիս **զՅոհանէս** համբակ քահանայ յիշել աղաչեմ¹⁶:

¹⁶ Գրված է կարմիր քանաֆով:

4

Ա.Ի.ՏԱՐԱՆ

ՈՀԲ

1223

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, Գ. Յովսէփեան,
Յիշատակարանք, 824-826¹⁷

Գրիչ՝ Յոհաննէս
Վայր՝ Թագվորի վանք (Կիլիկիա)

Ա

(Յովհաննու աւետարանի վերջում)¹⁸ Փառք սուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, ամեն:

Յիշատակարան:

Քանզի այն, որ անբաւանդակելի է յեղական բնութենէ ըստ իւր անսահման բնութեանն նոյնչափ և մարդասէր, յորժամ կամեցաւ զսէն իւր, որ առարածս իւր յայտնել և զստեղծուածս անարատ ձեռաց իւրոց փրկել ի գերողէն գորդիս մարդկան, նախ ծանուցաւ մարգարէիցն և ի խորհուրդս խորինս խաւեցաւ ընդ նոսա և առակաւ յայտնեաց զգալուստ միածնին իւրոյ, այն, որ հանութեամբ Հաւր և գործակցութեամբ Հոգոյն Սրբոյ միացաւ ի մարմնի անթաւաբար ի ձեռն անարատ կուսին Մարիամայ սուրբ Հոգոյն մաքրեցելոյ և զանխառնելիսն խառնեաց յանսահման աստուածային բնութենէ և ի բաւանդակելի մարդկային բնութենէ նոր խառնումն սփանչելի, որով փրկեցաւ:

Յորժամ կատարեաց զունտեսութեանն խորհուրդ և նստաւ ընդ աջմէ Հաւր, շնորհեաց մեզ զԱւետարանն սուրբ, զի Հոգոյն Սրբոյ շնորհաւ ի սիրտս մեր գրեսցի: Այսմիկ տկարացան մարդիկ և կամեցան զաւետիս կե-

¹⁷ Մագաղաթյա պատկարագրող այս ձեռագիրը պահվել է Ղալաթիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, համառոտ նկարագրությունն առկա է Արսեն Ղազիկյանի ցուցակում (*Համառոտ ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ*, Վենետիկ, 1969, էջ 13), որտեղից զլիսավոր հիշատակարանի մի փոքր հատվածը ֆաղելով հրատարակել է Ա. Մաթևոսյանը (*ԺԳ դարի հիշատակարաններ*, էջ 135): Սակայն ավելի վաղ ձեռագրի հիշատակարանները հրատարակել է Գ. Հովսէփյանը, որի «Յիշատակարանք»-ից վերցնելով այն ներկայացնում ենք ստորև: 2018 թ. մենք Մերի Ավետիսյանի միջոցով պարզեցինք, որ ձեռագիրն այժմ գտնվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում և ցուցադրվում է տեղի քանգարանում: Պատմաբան, դոկտոր Արսեն Ավագյանի միջնորդությամբ դիմեցինք Կ. Պոլսի Հայոց պատրիարքի փոխանորդ Տ. Արամ արքեպս. Աթեշյանին՝ հիշատակարանի էջերի լուսանկարներն ստանալու խնդրանքով, և դրանք ստացանք Վաղարշակ սարկավագի միջոցով: Լուսանկարները մեզ օգնեցին լրացնելու հիշատակարանի սկզբի փոքր հատվածը և մի քանի կարևոր սրբագրում կատարելու: Խորին շնորհակալություն ենք հայտնում վերոնշյալ անձանց:

¹⁸ Ձեռագիրը թերթակավված չէ:

նացն ի գիրս գրել, զի մի՛ մոռացմամբ աղաաղեսցին: Այսպիսում աստուածային գանձի և աւետեաց կենաց սրբոյ Աւետարանի ցանկացող եղեալ և աշակերտեալ **Թովմաս** սպասաւոր բանին Տեառն, ետ գրել ի փոքր նիւթի զմեծ և զանհասանելի խորհուրդ մարդեղութեանն Քրիստոսի, զի լիցի հանապազ կրել զսա ի ձեռին և ի սրտին գործարանի իբրև զծրարս տաշխի, խոկալով սովաւ ի տուէ և ի գիշերի՝ ի պատիւ և ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Արդ, եղև զրա գրութեան սորա ի թուականի Հայոց ի ՈՂԲ (1223), ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Տիրամարն, յանապատիս **Թագվորի** վանք, ընդ հովանեաւ քաղաքին **Մամեսախոյ**, ի թագաւորութեանն Հայոց Մեծաց **[Փիլիպոսին]**¹⁹ և ի հայրապետութեանն տեառն **Կոստանդեա**:

Արդ, որք աւկտիք ի սմանէ արիւնակաւ կամ գաղափարաւ, յիշեսցիք ի Քրիստոս զվերասացեալ վարդապետն²⁰ **զԹովմաս**, ընդ նմին և զծնաւսն իւր զբնաւ զարմն:

Աղաչեմ յիշել և զեղկելիս՝ զբազմամեղ և զանարժան սար(կաւագ) **Յոն(աննէս)**, որ և գրիչ. և որք յիշէք, յիշել լիջիք ի դպրութիւնս կենաց՝ ի յոյսն մեր ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յափտեանս, ամեն:

Ստացող՝ **Թովմաս վրդ., առաջնորդ Թագվորի վանքի**

Բ

(*Մատթէոսի վերջում*) Զստացաւ սորա՝ **զԹովմաս** վարդապետ և վերադիտող մեծի քաւարանիս Տիրամարն յիշեսցիք արհնութեամբ ի Քրիստոս ամենայն որդիք լուսոյ:

Գ

(*Ղուկասի վերջում*) Ընդ արդիւնահոս աւետարանչին սրբոյ վերադասեսցես, Տէր իմ Յիսուս, զստացաւ սորա՝ **զԹովմաս** վարդապետ և տէր մեծ քաւարանիս Սուրբ Տիրամարն, ամեն:

¹⁹ Գ. Հովսեփյանը նշում է, որ թագավորի անունը ջնջված է: Նկատի ունենալով հիշատակարանի թվականը՝ թագավորի անունը պետք է եղած լինէր Փիլիպոս: Վերջինս մերժվեց Կիլիկիայի հայ ազնվականության կողմից և մահացավ բանտում: Հավանաբար հենց այդ պատճառով են ջնջել նրա անունը: Հիշատակարանի նշված էջի լուսանկարը ձեռքի տակ ունենալու շնորհիվ հնարավոր եղավ նշմարել նաև անվան գրությունը, մասնավորապես սկզբի «Փ» տառը, շարունակության մեջ՝ զոյգ «լ» և բառավերջում՝ «ին», որն էլ թույլ է տալիս անունը վերձանել «Փիլիպոսին»:

²⁰ Զեռագրում «վարդապետն»:

4

Յետագայի ստացող՝ Երամիա առաջնորդ Արքակաղնի²¹

(Ղուկասի վերջում) և զիս **զԵՐԵՄԻԱՅ**, մեղապարտ ծառայ Աստուծոյ և վերջին ստացող, ամէն:

Ե

(Գլխավոր հիշատակարանի վերջում) Զնոյն դարձեալ և ես աղաչեմ, վերջին ստացող սորայ, **ԵՐԵՄԻԱՍ**՝ ծառայ Աստուծոյ և առաջնորդ սուրբ ուխտիս **ԱՐԲԱԿԱԿԱԿԱՂՆՅԱ**՝ զընթերցողոյ աստուածային տառիս, և զմեզ արժանի առնել յիշատակի առաջի զենոյն Յիսուսի, վասն զի ստացող եղէ սորայ՝ յընչից մերոց ի վայելս անձին և յիշատակ մեզ յետ ելից մերոց յաշխարհէ:

Արդ, որք ընթեռնոյ՞ զաստուածային տառս, յիշեցիք զմեզ առաջի Աստուծոյ և զծնողսն մեր և զեղբարս և զհոգևոր եղբայրն իմ **ՍԱՐԳԻՍ**, և դոմ յիշեալ լիջիք ի Տէր Յիսուս Քրիստոս, որ է արհնեալ յաւիտեանս, ամէն:

5

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՈՂԲ

1223

Վենետիկ 271²², Յուլյակ Վենետիկի, հ. է, էջ 615

Գրիչ՝ **Մոնումախի**
Վայր՝ **Եգնկայա**

200բ Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից, վասն որոյ ես՝ **Մոնումախիս** յամենայնի տկար գոյով եւ անվարժ գծողութեան տառիս, սակայն ազնականութեամբ Հոգոյն, հասի յաւարտումն կտակին, ի փառս Հար եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ:

Արդ աղաչեմ զամենիսեան, որ ընթեռնոյ՞ եւ ակտիք ի սմանէ, յիշեցիք զգրող սորա յաղաթ եւ յարհնութիւն եւ մի՛ յանէժ. գիտեմ զի ամենայն ախմերայի մեղադրէք, զի բազում պատճառ կա ի միջի, մի՛ զի ծեր եմ եւ ծանրա-

²¹ Հիշատակարանը հաջորդում է գլխավոր հիշատակարանին (գրված է 2-րդ սյունակում և հաջորդ էջին), անթվական է, սակայն հավանաբար ԺԳ դարին է վերաբերում, քանի որ ԺԳ դարում այս վանքում գրված ձեռագիր չի հիշատակվում: Այս հիշակարանին անմիջապես հաջորդում է մատյանի կազմմանը վերաբերող հետագայի հիշատակարան՝ գրված «ի քաղաքս Սարմպակ ի թվին ԶՂԸ (1549)»:

²² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. է, յօրինեց Հ. Սահակ վրդ. ձեմձեմեան, Վենետիկ, 1996, էջ 615-616:

ցեալ եւ ի լուսոյ պակասեալ, ձեռս դողդոշել, դեղս խառնակ եւ տեղիս անխնամ, վասնզի յամենայնէ չփառ, ի յարկէ, ի ծածկութից, աստար եւ թափանական, ոչ յընչից առաւելութենէ, այլ ի չփառութեանէ, որպէս այրին որ զամենայն զոր ունէր, արկ, եւ ես նոյնպէս զինչ կար էր բազում տառապանամ եւ աշխատութեամբ թերեւ կարացի ի յանգ հանել:

Բ

332 ա Փառք բարերարին Աստուծոյ, Հար եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն: Շնորհին Աստուծոյ սկսա[յ] եւ ողորմութեամբ նորին կատարեցի զգիրս **Գրիգորի Աստուածաբանի Նազդիագոյ** իպիսկոպոսի սուրբ վարդապետի, ի թուիս ՈՀԲ (1223): Գրեցաւ գիրքս այս ձեռամբ **Մանուսի** մեղապարտի, ծառա ծառաից Քրիստոսի, ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ **Յորդան** ֆահանայի եւ մար իմոյ **Ելենին**, եւ եղբարց իմոց եւ ֆեց: Աղաչեմ զ(ը)նթերցողոյ շիներ մեղադիր, այր ծեր էի եւ ծանրացեալ աչքս վատեալ եւ ձեռնս դողդոշել եւ ոչ գոյր իմ յարկ ծածկոյթի, անխնամ է տեղիս՝ ուր գրէի եւ յամենայն պիտոյից չփառ:

Որ կարդայք կամ ուսանիք, մեղաց թողութիւն հայցեցէք ի Քրիստոսէ, եւ Քրիստոս մեզ եւ ձեզ հասարակաց ողորմեսցի, ամէն:

Գրեցաւ գիրս ի գաւառ **Եկեղեաց**, ի մայրաքաղաքս **Եզնկայս**, ընդ հովանե(ա)ւ **սուրբ Գեորգա** սֆանչելագործ վկային Քրիստոսի, ի տան **Գրիգորի** սրբասէր ֆահանաի. Տէր Աստուած ողորմի նմա եւ որդոց իւրոց՝ **Քրիստոսաստորին** եւ **Յեվանիսի**, որք սպասատրեցին ինձ, ողորմի Աստուած եւ **Եզնկան** հոգոյն, ողորմի Տէր Աստուած **Վարդընջոյ** խապզին եւ **Պատրիկ** ֆարգործին եւ **Յեշնուսէր** եւ կին եւ իւր դստերն՝ **Գոհարտիկնայ**: Տէր Աստուած ողորմի ամենեցուն, որ մեզ ողորմութիւն են արարել: Ողորմի Աստուած եւ **Ստեփաննոս** հիւսան, որ զտաշտակ երեւ եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ընդ Հար եւ Սուրբ Հոգոյն փառք ի յափտեան, ամէն:

6

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ, ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ
ՎԵՆԵՏԻԿ 2636²³, Յուլյակ Վենետիկի, հ. 9, էջ 502-505

ՈԶԶ

1237

Գրիշ՝ Յուսիկ Բնյ.
Վայր՝ Սկետա (Կիլիկիա)

ա

349ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն յախտեանս յախտենից. ամէն: Հար անծնի, Որդոյ ծնիցելոյ, եւ Սուրբ Հոգւոյն ելալոյ, որ տայ զաւրուրին յինքն հայեցողաց, եւ ի շար եկամտիցն պարսպել զանձինս եւ արարչադիրն հետեւել սահմանի, որ եւ զիս զարացոյց ողորմութեամբ եւ գթութեամբ մարդասիրութեան իւրոյ, զողորմելի մեղաւ դատապարտեալ անիմաստ գրիշ, ելանել ի կատարումն եւ հասանել յարարտումն դրուատի յոքնեւրանեան սուրբ հարս եւ գերահոշակ վարդապետիս մերոյ **Գրիգորի Նարեկայ** վանից առաջնորդի:

բ

357ա Շնորհք ամենագարին Աստուծոյ յալէտահոս բղխմամբ յամենայն արարածս տարածանի եւ հուր սիրոյ մեծի եւ անհաս ողորմութեան եւ մարդասիրութեան նորա առ ամենայն ոք բորբոքի, Բանգի առատ է ի տուր եւ աննախանձ ի պարգեւս, ո՛չ նախատէ եւ ո՛չ գարշի յումեքէ, այլ զամենեցուն կամի զփրկութիւն, եւ որք ուղիղ մտամք, հոգեւորական աշաւ յար պշուցեալ ի նա հային արտասարթոր ակամբ, բազկատարած խնդրուածամք, ոգեկեցոյց աղաթիւք, պնդակրան ճգնութեամբ, զինքեանս ըստ կարողութեան տանար կազմեն հանգստեան ամենասուրբ Երրորդութեանն, իբրեւ զարգաւանդ երկիր զբանս աստուածային իմաստից սերմանն յինքեանս բուսուցանեն տալով պտուղ, ըստ փրկչին հրամանի առակատր բանին, որպէս եւ երանելի եւ աստուածարեալ ճգնազգեաց սուրբ հայրս եւ երշանիկ ի յոքոնս վարդապետս **Գրիգոր**, անաթ Հոգւոյն Սրբոյ, իսասեցաւ բանս զեղեցիկս եւ աստուածավայելուչս ոգեկեցոյց եւ պիտանիս միայնացելոց ի սերն Քրիստոսի: Պատճառ աղաթից եւ դեղ բժշկութեան ոգւոց ի թշնամոյն վիրատրելոց, եւ պարիսպ ամրութեան, եւ աւժանդակ զգուշացելոց, նաեւ որք մտաւորական

²³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. 9, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 502-505:

ակամբ հային յինճեանս համայնից յոյժ պատշանաւոր, որում եւ ոչ ինչ նուազ գոլով ըստ կարողութեան յառափնութենէ սրբոյս բարեպաշտ եւ աստուածասէր իշխանաց իշխողս **Կոստ(անդին)** Սեբաստաս եւ թագադիր Հայոց, տէր անմարտնչելի դղելիս **Լամբրունի**, ի բարի արմատոց բարի շառափոյ, որդի մեծագաւր Սեաստասին **Հեթմոյ**, որդոյ **Աւշնին**, որդոյ **Հեթմոյ**, որդոյ **Աւշնին**, որք յաշխարհէն **Արեւելից** եկեալ ընդ այլ ազատացն, ընդ բռամբ ածին զանառիկ բեարդս **Լամբրուն**, եւ ժառանգեցոցին հարք որդոց եւ եհաս մինչեւ ի սա. որ եւ ըղձալի տենչմամբ փափագաւ սա միշտ գրոց ընթերցման եւ պայծառացոցիչ եկեղեցեաց եւ սրբոց մենաստանաց, որք ընդ ձեռամբ սորին հովուին:

Եւս առաւել փոյթ ունի բարեկարգութեան սոցա եւ շինման քան ի հոգս աշխարհական, որ եւ յոյժ վայելչացոյց սպաստմբ սրբութեան, ի պատիւ մեղսաբաւիչ եւ կենդանարար բաշխման մարմնոյն տէրունեան, որ եւ միշտ տոշորի սիրով սրբութեան ար (ը)ստ արէ առաւելեալ ի նոյն, նաեւ աստուածաշնորհ իմաստիցն, որ ի սմա գերագանցէ ամենայնի քան զբարեպաշտ նախնիսն իւր եւ զհաւ: Որ եւ յոյժ վայելչացոյց եւ ամրացոյց զաստուածպան ամրոցս **Լամբրուն** պարբսպամբ եւ գեղեցիկ բրնամբ, սրխաւի եւ գեղեցիկ շինմամբ տանարաց եւ սրբաշէն յարկաց, ի վայելս իւր եւ աստուածատուր զաւակացն, եւ յիշատակ բարեաց ազգաց յազգս: Եւ միայնացեալ սա ի ծնաւոյց եւ յեղբարց եւ քերց եւ ի բարեպաշտունի զուգակցէն՝ պահպանեալ միշտ վերին աշոյն զարութեամբ նախախնամութեամբ եւ ազնութեամբ մարդասիրին բնակէ յամրոցս, իբրեւ հաւ զձագս ընդ թեւամբ հնգեկին զաւակամբ, սփոփանամբ Հոգոյն Սրբոյ. զի եւ որք ունէին զթոյնս շարութեանն թշնամիք մերձակայք զբազմառատ երախտիսն զոր ի սմանէ առ նոսա՝ մոռացան, եւ յայտնի երեւեցոցին զմթերեալն ի վաղոց հետէ, որով եւ յետսն(ա)հանջեալ ամալթալից դարձան, յափշտակեցին զառ եւ զաւար գեղից եւ ագարակաց եւ աւարին ոչ գոյ համար:

Արդ, բարեպաշտս այս, որպէս վերոյ յիշատակեցամ, գրոց ընթերցման փափագեալ, սիրեաց եւ զայս զիր սուրբ եւ հրամայեաց ինձ՝ իւրոյ սեպհական ծառայի զաւակի, անպիտան եւ յետին քահանայի, թարմատար եւ փցուն գրչի **Յուսկան**, գրել զսա լայն եւ ընդարձակ գրով, որպէսզի դիւրընթերց լիցի իւր եւ բազմաց: Եւ իմ ըստ կարողութեան հնազանդ գոլով սմին յաղագս հայրենի եւ բնական սիրոյն, որ առ սա, եւ բազում բարերարութիւն գտեալ ի սմանէ, իբրեւ հայր ի վերայ որդոյ, ըստ (ը)ղձալի տենչմանն ետափափագ աստուածսիրութեանն, սկսայ եւ կատարեցի ողորմութեամբն

Քրիստոսի, ի թուականիս Հայոց ՈԶԶ (1237), ի դիտապետութեան տեանն **Կոստ(անդնի)** եւ ի թագաւորութեան փութ որդոյ սմին բարեպաշտ թագաւորիս **Հեթմոյ**, ի սուրբ ուխտս **Սկեռայ**, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս եւ մաւր իւրոյ Աստուածածնին եւ կենսունակ եւ փրստոսասելեռ սուրբ Խաչիս:

Արդ զամենեսեան աղաչեմ, որք փարթամանայք սովաւ ուսմամբ եւ կամ ընթերցմամբ եւ կամ գաղափարաւ, որք վայելէք ի հոգեւոր սեղանոյս եւ ի փաղցրանաշակ անուշահամ աստուածայնոյ բանիցս, զվերոյ յիշատակեալ բարեպաշտ եւ աստուածասէր իշխանաց իշխանս՝ մեծապատիւ Սեբաստաւս եւ թագադիր Հայոց, զտէր աստուածաշէն ամրոցիս **Լամբրունի**, յիշեսցիք ի Քրիստոս, հանդերձ աստուածապարգեւ տղայովք իւրովք, որ անուամբ յորջորջին **Հեթում** եւ **Աւշին**, եւ դստերաց **Կեռանին**, **Քէֆանոյի** եւ **Շահանդըխտին**, որում տացէ Տէր Յիսուս ժամանակս երկայնս եւ բազմաւրեայք լիցին ի վերայ երկրի, անխոռով եւ անասասն ի փորձութեանց հոգոյ եւ մարմնոյ, բազում խաղաղութեամբ եւ անտրտում ուրախութեամբ վայելեալք */// (անավարտ է):*

Գ

27բ Զփրիստոսասէր բարեպաշտ Սեւաստաւսն եւ զմեծ թագադիրն **Կոստանդին**, զստացաւ այսմ Ողբերգութեան, յիշեսցիք ի Քրիստոս յաստուածախաւսութեան ձերում:

դ

43բ Ստացաւ սորա պարոն **զԿոստանդին**, զորդի մեծագաւր Սեւաստոսին **Հեթմոյ**, յիշեսցիք ի Քրիստոս:

ե

54ա Զամենամեղ գրիչս յիշեսցիք ի Տէր:

զ

82բ Զմեծ թագադիրս **Կոստանդին** յիշեսցիք ի Քրիստոս:

է

91բ Զամենամեղ եւ զեղկելի գրիչ եւ զձնաւոսն իմ յիշեսցիք ի Տէր, ո՛վ դասք լուսերամից:

Ը

105բ Ստացալ սորա **գԿոստ(անդին)**, տէր **Լամբրունիս**, յիշեսցիք ի Քրիստոս եւ գորդեակս իւր:

Ք

107ա Տէր իմ, Տէր Յիսուս, բարեխաւսութեամբ սրբոցս աւգնեա՛ **Կոստ(անդին)** Սեւաստասի:

Ժ

133բ Զամենամեղ գրիչ **Յուսիկ** յիշեսցիք ի Տէր, աղաչեմ:

Ժա

203բ Ստացող սորին գտէր **Լամբրունիս** զբարեպաշտն **գԿոստ(անդին)**, յիշեսցիք ի Քրիստոս:

Ժբ

232ա Մեծագարմ իշխողիս **Կոստ(անդեայ)** աւգնեա՛ Քրիստոս:

Ժգ

280բ Զողորմելի գրիչս **Յուսիկ** աղաչեմ յիշել ի Տէր, դասք աստուածախասից:

Ժդ

301ա Զողորմելի գրիչ **Յուսիկ** յիշեսցիք ի Քրիստոս:

Ժե

344ա **ԶԿոստ(անդին)** յիշեսցիք ի Տէր, զթագադիրն եւ տէր **Լամբրունին**:

Ժզ

356բ Զբարեպաշտ Սեւաստաս **Կոստ(անդին)** յիշեսցիք ի Քրիստոս, աղաչեմ. եւ զմեղապարտ գրիչս **Յուսիկ**²⁴:

²⁴ Բառացի կերպով կրկնվող մի քանի հիշատակագրություն զանց ենք անել (Կ. Մ.):

7

ԺՈՂՈՎԱԾՈՅ ՍԱՀԱԿ ԿԹՂ. ԽԱՊԱՅԵԱՆ
Երուսաղէմ 3602, Ն. Պողարեան, *Յուցակ*, հ. ԺԱ, էջ 22²⁵

ՈԶԹ

1240

Գրիշ՝ Գրիգոր
Վայր՝ Մլին (Կիլիկիա)

ա

Փառք Ամենասուրբ Երրորդութեան եւ միասնական աստուածութեանն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտենից ամէն:

Ի թուականիս Հայոց ի ՈԶԹ (1240), ի հայրապետութեան տեառն **Կոստանդեայ** եւ ի թագաւորութեան փրիստոսապսակ արքայի **Հեթումոյ**, գրեցաւ Աւետարանս կենսաբեր, յաշխարհիս **Կիլիկիոյ** ձեռամբ մեղապարտ ֆահանայի **Գրիգորի**:

Ո՛վ աստուածասէր եւ սրբազան ֆահանայք եւ սպասաւորք սրբոյ եկեղեցոյ Աստուծոյ, յորժամ աւգտութեան ինչ հանդիպիք ի սմա ընթերցմամբ կամ ընդարինակելով, կամ տեսանելով, գտացող սուրբ Աւետարանիս զսրբասէր եպիսկոպոսն՝ գտէր **Սարգիս**, եւ զհայրն նորա զպարոն **Յուսէփ** եւ զմայրն **Խորինչահ**, եւ զեղբարս նորա՝ **Չաֆարէ** աստուածամերձ ֆահանայ եւ **զԳրիգոր** եւ **զԼիպարիտ** եւ **զՃունիւր**, եւ ֆեռին նորա գտէր **Ստեփաննոս**, յիշեսջիք ի սուրբ աղալթս ձեր:

բ

Ստացող՝ **Սարգիս Եպս. Սիւնեաց**

Ես նուաստ եպիսկոպոս եւ տարաշխարհիկ եղեալս **Սարգիս**, յերես անկեալ Աստուծոյ եւ աղաչեմ զամենեսեան յիշել ի սուրբ աղալթս ձեր զփրիստոսապսակ թագաւորս **Հեթում** եւ զհայր նորա՝ զպարոն **Կոստանդին**, եւ զեղբայրս նորա՝ զսրբասէր **Բարսեղ** ֆահանայն եւ զպարոն **Սմբատ Գունդուստապլ**, եւ զպարոն **Աշին**, եւ զպարոն **Լեւոն**, եւ զֆորս նորա, զսրբասէր կրանաւորն **Հոփիսիմէ**, եւ **Թեֆանո** եւ **զԿալամառի**, զի յոյժ երախտաւոր են լեալ ինձ ի տունս եւ ի վանս իւրեանց բարերարութեամբ, զոր հատուացէ նո-

²⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի Սրբոյ Յակոբեանց, հ, ԺԱ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1991: Հրատարակիչը ծանոթագրել է. «Յիշատակարան Աջապահեան Մատթէոս Էֆ.ի ֆոլ գտնուած մագաղաթեայ Աւետարանին» (անդ, էջ 22):

ցա բարերարն Աստուած հարիւրապատիկ եւ բիւրապատիկ աստ եւ ի հանդերձելումն. ամէն:

Դարձեալ աղաչեմ զվայելողոյդ աստուածային տառիս, զի զփափափումն սրտի իմոյ կատարիցէ՛ք, զի ուր կատարումն իմ լիցի եւ գերեզմանն իմ, անդ կացցէ Աւետարանս ի յիշատակ բարի յիշելոցս եւ յիշողացոյ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառք յափտեանս ամէն:

Իսկ մանրամասն ծաղիկ սորա կատարեցաւ ի մեծ խմբարանիս Մլիճի ընդ հովանեաւ Սբ. Մարն Լուսո, յառաջնորդութեան տէր **Գրիգորի՝** հեզի եւ խոնարհի, ձեռամբ սրբասնեալ ֆահանայի **Կոստանդէայ** եւ **Թորոս** սարգ[աւագի], որոց ողորմեսցի Տէր: Այլ ես՝ յոգնամեղ ստացող սորա տէր **Սարգիս Արեւելցի**, ի նահանգէ **Սիսական՝** ի մեծահոշակ աթոռոյ **Տաթև** կոչեցելոյ, եւ տարագրեալ վասն մեղաց, ժամանեցի յայս սուրբ ուխտ եւ բազում ընդունելութիւն եւ հանգիստ գտի ի վերոյգրեալ թագաւորահարէն՝ ի մեծ պարունէն **Կոստանդէա**, առաւել ֆան զարժանն մեր, եւ յայլ միեղէն եղբարցս: Արդ՝ աղաչեմ զձեզ, ով մանկունք Սիովնի, կրկին արհնութեան արժանի առնել զայն:

8

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՐԱՊԻԶՈՆՆԻ ԵՒ ԳԻՒՂԵՐՈՒՆ ՈՒ ՎԻՃԱԿՆԵՐՈՒՆ
Երուսաղէմ 3851, Ն. Պողարեան, *Յուլյակ*, հ. ԺԱ, էջ 294-295

ՉԱ.

1252

Գրիչ՝ **Սարգիս Սամովիլեանց** երէց
Վայր՝ **Հաղբաս**

Փառք Սուրբ Երրորդութեանն Հար եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յափտեան:

Յընտրելագունից մերոց եղբարց մարս լուսոյ բազմազան զաւակաց Նոր Սիոնի Կաթողիկէիս **Հաղբասայ**, ցանկացող եղեալ ի բազում ժամանակաց, **Սարգիս** անուն, որ եւ **Սամովիլեանց** երէց կոչեմք, ետ գրել զՊատմութիւնս արեգակնայոյս եւ աստուածաբան սուրբ առաքելոյն եւ սֆանչելագործ արետարանչին Յովհաննու, զոր գրեաց Պոռխորոն հետեւող նորին եւ աշակերտ, զվարս նորին եւ զսֆանչելիսն ամենայն ստուգութեամբ, եւ զՏեսիլ նորին արետարանչի ապագայիցն ցուցմանց, զոր ետես հոգոյ ակամբ ի **Պատմոս** կղզոյ: Ընդ նմին ետ գրել եւ ըզՊատմութիւն զդարձ գերութեան անուանի եւ մեծագաւ ամենագով եւ աստուածունակ կենսակիր Սուրբ Նշանին մերոյ, զոր Աւագ Խաչ անուան (*Երկու տող ջնջված*) զորպիսութիւն բերելոյն ի գերութիւն յերկիրս ձեր, եւ զդառնումն նորա ի ձեռն երկուց սուրբ Հարանցն անդ-

րէն ի տեղի իւր: Եւ եթէ որպիսի սէր եւ միաբանութիւն եղբայրական լեալ է ի մեր միջիւ եւ ի ձեր, գոր ի յանցիւր ժամանակաց մոռացումն է եղեալ: Եւ դո՛ւ սիրոյ կապակցութեան աղագաւ, ով սուրբ հարբ եւ եղբարբ, խնդրեցե՛ք զՊատմութիւն Սբ. Նշանիս մերոյ, եւ ես նուաստ եւ անպիտան հողս **Սարգիս**, թէպէտ եւ լի եւ անթերի է մեծապատիւ Սուրբ Ուխտ ձեր կրեմամբ եւ պատմութեամբ սրբոց, այս Պատմութեանն ... (*մի քանի բառ ջնջված*) թէպէտ եւ իրիդ փոքր են յաչս մարդկան, բայց եւ մեծ յոյս կալայ ի **Սուրբ Կարապետոյ** եւ ի ձեր սուրբ աղաթիդ, եւ ետու գրել զՊատմութենէս վասն յիշատակի ինձ եւ ծնաւոյց իմոց եւ եղբարց, եւ իմ սնուցած տղայիս **Ստեփանիս**, եւ ընծայեցի առաջի **Սուրբ Կարապետիդ**, եւ պատուական եւ փառաւոր սուրբ եղբայրութեանդ: Եւ զիմ մահու ձայն լսէք, զիմ միաբանութեանն գլխատակն կատարէք, եւ զինչ որ այլ յիս կարողութիւն լինիցի առնեմ: Եւ որք զմեզ յիշեն, յիշեալ եղիցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է արհմեալ յափտեանս յափտենից ամէն:

Գրեցաւ սուրբ Պատմութիւնս ի **Հաղբատ** առաջի աստուածընկալ **Սուրբ Նշանիս**, յետն հարիւր եւ մի թուականութեանս Հայոց (1252) (*մեկ բառ եղծված*), ի հայրապետութեան **Կոստանդնայ** Հայոց կաթողիկոսի, յեպիսկոպոսապետութեան երկուց լուսաւոր արանց */// (մեկ բառ ջնջված)* մերոյ տէր **Համագաս[պայ]** */// (երկու բառ ջնջված)* նահանգիս, եւ մեծահարկ տանս **Հաղբատայ**. Եւ յառաջնորդութեան **Այրարատեան** գաւառին **Սբ. Կարապետին Յովաննու վանից**, մեծապատիւ բարունոյն տէր **Մկրտչին**:

9

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Վենետիկ 274, Յուլյակ Վենետիկի, հ. 2, էջ 340

ԶԼԴ

1285

Գրիչ՝ Վրթանէս

209բ Մեղայ տեառն Աստուծայ, **զՎրթանէս** գրողս յիշեալ ի Տէր: Գրեցաւ ի թուականիս Հայոց **ԶԼԴ** (1285) ի յապրիլն 2 (6) եւ ի սահմի ԻԸ (28):

10

Ա.ԻԵՏԱՐԱՆ

Ս. Էջմիածին 194

ՁԽԱ

1292

Նկարիչ՝ Սիմեոն
Վայր՝ Արմէնի լեռ (Կիլիկիա)

152բ ԶՍիմեոն անարժան նկարիչս յիշեալ ի Տէր, ո՛վ սուրբ պահող և Աստուած գեեգ²⁶։

11

Ա.ԻԵՏԱՐԱՆ

Մասնավոր հավաքածու²⁷

ՉՀԲ

1293

Հետագայի ստացող՝ Բարսեղ Իրեցորդի
Կազմող՝ Ստէփանոս Երկաթենց
Վայր՝ Սիս (Կիլիկիա)

Ընդ նմին յիշեցեմ զանարժան ծառայս Ա(ստուծոյ) զԲարսեղ Իրեցորդի և զհայրն իմ զՎահրամ քահանայ և զմայրն իմ զՄարիանէ և զեղբարքն իմ զԼեւոն և զԳրիգոր և զԹորոս և զգոյրքն իմ զԿառմառի և զԽոսրովանուշ և զամուսինն իմ զՇահանդուլիսա և զդուստրն իմ զՏամալայժ և զամենայն ծնողսն իմ, զի ստացա զս(ուր)ք անետարանս ի յարդար ստացուածոց ի ժամանակին, յորժամ նեղէր ազգն իսմայելացոց ի վերայ քրիստոնէից։ Նայ գնաց հայոց կաթողիկոսն Տէր Կոստանդին Գրագրկցին ու ես ի յիւր ծառայութիւնն դեսպան առ Մսրայ տէրն՝ Մելիք Նասրն. նայ ի Հաղպ գնեցի զսուրբ անետարանս

²⁶ Ձեռագրում եղած՝ Գեորգ գրչի բուն հիշատակարանը տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 692-693: Նկարչի հիշատակագրությունը լրացվում է ըստ Դավիթ Ղազարյանի կազմած անտիպ ձեռագրացուցակի:

²⁷ Ավետարանի գրչության 1222 թ. հիշատակարանը տե՛ս վերևում: Սույն հիշատակարանի հրատարակությունը տե՛ս Տեր Ներսես ավագ քահանա Ներսեսյան, «Կորստից փրկված մի ձեռագրի ողիսականը», էջ 153: Սույն հիշատակարանը գտնվում է ձեռագրի 17-րդ արևակում (մատյանը թերթակալված չէ): Հիշատակարանից երևում է, որ 1222 թ. Ստում գրված Ավետարանը հետագայում հայտնվել է Հայկում, որտեղից այն գնել է Բարսեղ Իրեցորդին, բերել է Սիս և կազմել տվել Ստեփանոս Երկաթենցին: Ձեռագիրն ունի նաև հետագայում կազմմանը վերաբերող 1516, 1579, 1791 թթ. հիշատակարաններ (նույն տեղում, էջ 152):

ու եկի ի Սիս, կազմեցի ի թվակ(անիս) **ՉՀԲ** (1293) և որ գմեզ յիշէ, նայ ինքն յիշեալ լինի ի տէր Ա.(ստուա)ծ մերմէ:

Զկազմող սորայ **գՍտէփանոս** երէց **Երկաթենց** յիշէցէք ի Տ(է)ր:

12

Ա.Ի.ԵՍԱՐԱՆ

Ս. Էջմիածին 1250²⁸

ՉԽԲ

1293

Հեղինակ՝ **Հեթում պատմիչ Կոռիկոսցի**
Գրիչ՝ **Վասիլ հրովարտականց դպիր**
Վայր՝ **Կոռիկոս (Կիլիկիա)**

444ր Յոֆնական և անթուելի, բազմապատկեալ բիրատու բարեաց բաղ-
ձացաւ և պարունական, երանաւտ և երկնատու շնորհի ընդունակ և ունա-
կական գիրքս այս աստուածունակ և գերադրական ի յարմարութենէ իրին, և
յաւետատրական ձայնէն և ի գերահրաշ գործոյն առընկալեալ զանունա-
դրականն կոչումն որ ասի Աւետարան: Յիրին բնութենէ բանատրապէս
եղեալ զի յաւտ և յաւերժական և յարածից կենաց և բարեաց յալիտենակա-
նաց, գոր ընկալաւ բնութիւնն՝ է պատմող: Եւ ի ձայնին զարութենէ զի աւե-
տեաց և ուրախական խնդութեանց, և անտրամական կենաց վայելչութենէ է
հնչող, զիչումն Աստուծոյ յերկիր և զելս մարդկան յերկինս ավետարանէ,

²⁸ Մինչև 1980-ական թվականները ձեռագիրը կորած է համարվել: Հիշատակարանը զգալի կրճատումներով արտագրված է եղել 1608 թ. մի ժողովածուի մեջ (ՄՄ 5613), որից էլ 1948 թ. հրատարակել է Վ. Հակոբյանը (Վ. Հակոբյան, «Հեթում պատմիչի հիշատակարանը», ՀՍՍՌ-ԳԱ «Տեղեկագիր», 1948, N 10, էջ 66-73), իսկ երկրորդ անգամ՝ Ա. Մաթևոսյանը (ԺԳ, էջ 718-720): Սկզբնամասի (ձեռագրում՝ 10 էջ) և ավարտի կրճատման հետևանքով անհայտ են մնացել գրչի ու ծաղկողի, ինչպես նաև Հեթումին պատկանած ամրոցների անունները ու մի քայնի այլ էական մանրամասներ (հրատարակվել է «Արդ, յայսմ ժամանակի ցաւը աշխարհ իբրեւ գծեր...» հատվածից մինչև՝ «Եւ նմա փառք յամենայն արարածոց իւրոց»): Շահե արեւելս. Անեմյանը 2006 թ. իրականացրել է ամբողջական հրատարակությունը (Շ. Անեմեան, «Հայոց սպարապետ Հեթում պայլի յիշատակարանը», Հայերէն Աստուածաշունչը (Տայագիտական ուսումնասիրութիւններ), Երևան, 2006, էջ 344-351), այնուհետև մենի՝ ձեռագրի համեմատությամբ որոշ սրբագրումներ կատարելով (Կ. Մաթևոսյան, Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրութիւնը, Երևան, 2011, էջ 95-100): Սույն Ավետարանը, որը գրվել է Կոռիկոսի նորաշեն ծովային ամրոցի նորակառույց եկեղեցու համար, որոշ ժամանակ հետո տարվել է Կիպրոս և պահվել տեղի Ս. Աստվածածին եկեղեցում: 1891 թ. ձեռագիրը գտնվել է Կեսարիայի Ս. Կարապետ վանքում: Մեծ եղեռնի փորձությունների միջով անցելով 1980-ական թթ. մատյանը հայտնվել է Նյու Յորքում՝ պարսկաստանցի հրեաների ձեռքում, որոնցից գնել է Շահե արեւելս. Անեմյանը, բերել Հայաստան և նվիրել Ս. Էջմիածնին:

զհաղորդակից և զհամաբնակիցն լինել հրեշտակաց և մարդկայինս սեռի նառէ զերկնային առաքինութիւնս՝ յերկրի տնկեալ մերոյն Յիսուսի մեզ ծանուցանէ: Իսկ ի գործոյն զի աստուածագործ և աստուածարար և անմահական բարեաց է հրատարակող, զոր բանին Աստուծոյ մարդանալովն ընկալաւ: Եւ զարիակացն նրկարագրութեան, զնշմարտութիւն ի կատարումն (445ա) հասեալ տեսաւ անտարանական վարդապետութեամբ լուսաւրեալք, որ են նշանք հրաշից և բանք աստուածախաս վարդապետութեան, և գործք սմանչելեաց աստուածութեանն Քրիստոսի, նոր աշխարհի ստեղծագործութիւն և մարդկային բնութեանս նորոգութիւն, զոր ուսուցանէ մեզ անտարանականս վարդապետութիւն:

Զի զառ ի չորից նիւթոց շինեալ աշխարհս զգալի և յանցատրութեամբ նախաստեղծիցն եղծեալ յապականութիւն, չորիք անտարանչալսու հարտարապետալսու աշխարհի անտարանական վարդապետութեամբս բժշկեալ և կանգնեալ զաստուածաշէն տուն աշխարհիս և զաստուածաբնակ տաճարս կենդանի զգործ ձեռիւնն Աստուծոյ զմարդ, զոր խոտորեալն ի բնութենէս բանսարկուն իբր չորիք եղջիւրալ սեռական ախտիւքն հարեալ, ցրուեաց և կործանեաց ըստ տեսանող մարգարէին, եկեալ չորս հիստունքս և արուեստատրքս հոգիքընկալ մեծահաննար իմաստութեամբ վերստին շինեցին զերկին աշխարհիս տուն զանբանականն և զբանաւորս:

Եւ որ ի յերկինս երկնից յաթոռ չորեկերպեան ի քառադէմ կենդանիս նստեալ հանգչէր, զոր (445բ) ետես մարգարէն մարդ և առիւծ, եզն և արծիւ, ի թագաւորական կենդանիսն թագաւորն թագաւորաց բազմեալ, զնոյն կերպարանս և զդէմս և զձև արթոռոյ յերկրի պատրաստէր: Զչորք թիւ անտարանչացս աստուածութեանն փառաց արթոռ և բարձալ և ի տիպ երկնաւորացն յերկրի հանգուցանող: Որք և չորեկերպեան արթոռ զանձնաւորական մասունս մեր յարինեցին, զանասնականն մասն յերկնաւորսն և ի հրեշտակականն փոխելով:

Եւ յաւետարանին քառագոյն համապատութիւն զի որ յաթոռ աստուածութեանն դէմք մարդոյն է ի մեզ բանականն և յաւետարանիչսն նշանակ Մատթէոսի, զբանն մեր փոխեալ ի հրեշտակացն նմանութիւն և զխասս յաւետարանչացն յարդիւնականութիւն: Իսկ դէմք առիւծուն ի մեզ սրտմտականն և յաւետարանիչսն Մարկոս, վասն համառատութեանն դարձուցանելով զսրտմտականն մեր ընդդէմ չարին և զարիանալն ի բարին: Իսկ զուարակն առ մեզ ցանգականն, և յաւետարանիչսն Ղուկաս: Ողջախոհութեամբն // (446ա) ուղղել զցանգականն մեր ի հոգևորսն և յաստուածայինսն և ըստ նմանութեանն Քրիստոսի և եզինն պարարակի, զենոյ զանդամս մեր երբաւոր: Իսկ ըստ արծոյն ձևոյ, որ յաթոռն Աստուծոյ և ի մեզ արդարութեան զուգահասարութիւն և նշմարտութեան գիտութիւնն, որովք արծաբար

բևով վերաբերիմք յերկինս, ըստ անտարանչին Յովհաննու որոտալով ի բարձանց:

Սոքա են և նշմարիտ գեաֆն եղեմաբովս զոր առաջին արարչութեան պատմողն գծագրեաց աղբիր ելեալ յեղեմայ ռոռգելով զդրախտն և անտի ի չորս բաժանել գնացս գետոց յոռոգումն տնկոց և ի զովացումն կենդանեաց: Իսկ ըստ նորոյ արարչութեանս. աղբիր Տեառն յանսահման ծովէ ծնեալ ի Հարէ՛ անժամանակ: Ըստ մարգարէին՝ ի քէն է Տէր աղբիր կենաց, և դրախտ աստուածատունկ կոյսն ամենաշնորհ, ուստի ել Տէրն ժամանակատուր ծննդեամբ՝ ռոռգելով զբանատուր տունկս նորոյ դրախտի, զառաքեալսն և զֆարոգիչս բանին: Եւ բաժանեալ ի չորս գետոց գնացս՝ ի չորս անտարանիչսն աստուածաբարոզ, որք արբուցին (446բ) զտիեզերս յանհամական ջրոյն, որով զտապ ջերմութեանն զովացուցին և զբոց մեղացն շիջուցին և յաշխարհի զվիեակ ընթացից գետոցս հաւատովք և գործովք ծաղկեցուցին և զհոգոյս մերոյ մասունս դրախտ աստուածային յարդարեցին, զի առաջին գետն **Փիսոն** թարգմանի բերան հրոյ, և յանտարանիչսն Մատթէոս. երգ կենաց, լուսատուրեաց յաշխարհիս կողմանս զարևելս և ի մասունս հոգոյն զբանականն, որ է արևելք. և յոյս ի բնութիւնս մարդկան, ուր և իմաստութեան տունկք բուսանին, և փայլեն ծնեալք ի խոհականէն: Երկրորդ գետն **Գեհոն** թարգմանի լանջք, յորում և ի մեզ բունեալ է սրտմտութիւնն: Իսկ անտարանիչսն Մարկոս, բղիսեալ զանտարանն **յԱղեֆսանդրիա**, ուր և գետս ընթանայ և ի մեզ իբր անդ ֆաշասնունդ բուրէ ծաղիկ արիական ֆաշութեանն, ի ստին դրախտի: Երրորդ գետն **Տիգրիս** գնա ի **Միջագետս**, և ցանգութիւնն, որ ի մեզ ի մէջ յորովայն և յանտարանիչսն Դուկաս, անտարանեալ ի **Հոռով** և **յԻտալիա**, (447ա) և ողջախոհութիւն, որ ի մեզ, վայրենացեալ ախտիցն ընդդիմանա: Գետն չորրորդ **Եփրատէս**, որ և **Արածանի**, և ի մեզ արդարութիւնն և յանտարանիչսն Յովհաննէս ֆարոգեաց **յԱսիա** և հոգոյն վտակաւք զտիեզերս ռոռգեալ և արդարութիւնն զաստուածային կամսն ի բոլոր մասունս հոգոյն տարածեալ:

Սոքա են չորք կառքն մարգարէահրաշ, յորս բազմագունի ձիֆն լծեալ էին, որ են աշակերտք Աւետարանին՝ Հոգոյն պարգևաւք, ի զանազան ներկուածս գունոց գեղեցկացեալ, որով կառավարեաց ֆաշ հեծեալն ընդ տիեզերս, որ և ինքեանք կառք եղեն և ի բանատուր նիւթոց մարդկութեանս կառք աստուածութեանն կազմեցին և զգոյն որակաց ձիոցն ի մեզ խորհրդաբար տպարեցին երանգս. ընդ կարմրութեան գունոցն զամալս պատկառանացն ի մեզ տնկեցին, որով խտտորիմք ի վատթարէն, և հրամանք ի սէրն Աստուծոյ ջերմացուցեալք ի գործս բարիս: Եւ ըստ սևատեսակ ձիոցն զաստուածաւանդ խորհուրդն ծածուկ և թաֆուն (447բ) ունել մեզ աւանդեցին և որպէս զձիսն սպիտակափայլ ծերունական իմաստիցն հմտացուցին և ըստ բազմանկար

կիտուածոյ խայտիցն զանազան հանճարով հոխանալ ուսուցին տեսական և գործնական երկասիրութեամբն, յորում բարձրանայ Աստուածն բան:

Աստանաւ ի կատարումն հասեալ լինի խորհուրդ չորից չափոց մանանային, զոր յոսկի սափորն էարկ Մովսէս հրամանան աստուածային: Իսկ անտարանական վարդապետութեամբս անձինք մեր ոսկիացան հրով Հոգւոյն հալոցաւ զտեալ և փոխանակ Մովսէսի Աստուածն մարգարէից չորք ձափով անտարանչացս զմանանայն կենաց յանձինս մեր արկեալ:

Ի չորս թիւ ընդունակ անաթոց, յոգի և ի մարմին յանցաւոր կեանս և յապագային, զկարգ և զչափ սոցա գիտելով: Եւ զի առաջին յանտարանսն կարգելոց էր Մատթէոսին, նոյն և այս խորհուրդ մարգարէիք նկարագրեցաւ և ի նահապետսն տպաւորեցաւ և ի բնութիւնս կարգադրեցաւ, զի յաթոսն չորեկերպեան (448ա) չորից կենդանեացն դէմք էին. վեցտասան, և չորք չորք յամենայն կողմանս ընթանային: Զի անտարանիչքն սուրբ ի չորս կողմանս տիեզերաց քարոզեցին, յորս և անտարանք նոցա տարածեցան: Եւ որպէս անդ յամենայն կողմանս մարդն յառաջանայր, նմանապէս և Մատթէոս ի կարգ դրութեան անտարանացն առաջին կարգէր: Յուցանի այս խորհուրդ և ի սանդուխմն Յակովբա աւծեալ արձանն ի խոնարհ առկայացեալ և ի գլուխն Տէր հաստատեալ: Այսպէս և Մատթէոս յաստուածութեան անուանէն սկսանի և Յովհաննէս զաստուածութիւնն անտարանէ: Եւ սանդուխմն ի մէջ երկուցն՝ Մարկոս և Դուկաս, որք և զմարդիկ յերկինս հանեալ բարձրացուցին և զհրեշտակս իջանէլ առ մեզ միջնորդեցին: Այլ և սանդուխմ մարդեղութիւնն յերկրի հաստատեալ և աստուածութիւնն ի գլուխն երևեալ, զի որպէս սանդուխմն ի բարձունս ելանեն, այսպէս և Քրիստոսի առ Հայր ելանեմք և մարդկութեամբն յաստուածային գիտութիւնն հասանեմք: Նմանապէս (448բ) և ի բանաւոր մարդկային բնութեանս մասունս հոգւոյ առաջին է բանականն, և ապա այլն ըստ կարգի դասեալ և թուեալ: Նմանապէս և յանտարանս Մատթէոս: Այլ և չորք են անտարանիչքն, զի Քրիստոս զոր անտարանեցին, Աստուած էր և մարդ. երեքն ըստ արինաց վկայք մարդեղութեան նորա, իսկ Յովհաննէս ընդ երիցն վկայ աննառելի և անժամանակ աստուածութեանն նորա:

Արդ, այս բիրապատիկ բարեաց և խորհրդոց աննաոից և գիտութեանց գերագանց և իմաստութեանց երկնային, պարագրաւ անտարանի ցանգացող եղէ **Հեթում**, որդի **Աւշնին**՝ եղբար **Հեթմոյ** Հայոց թագաւորի, որ և ես՝ **Հեթում** շնորհաւ ողորմութեանն Աստուծոյ տէր **Կոտիկասոյ** և **Մանիանին**, **Պունառոյ**, **Անամուտին** և **Կուպային** և այլոց ամրոցացն, որ առ կողմամբն **Սավրիո** և զաւառաց բերդիցն, ստացա զսուրբ Աւետարանս և փափագեալ սրտի բաղձանաւ ետու գրել զսա իմոյ իսկ հրովարտակաց դպրի **Վասլի**, որ երբեմն սարկաւագ լեալ և այժմ (449ա) ծառայէ ինձ միամտութեամբ և մտերմաբար սիրով:

Ջոր և պարտ է յայտնել զառիթ և զպատճառ գրելոյ սորին: Զի ի ժամանակս վերջին, յորում ժամանեալ հասաւ մեք, ցաւէր աշխարհ ամենայն իբրև զայր ծերացեալ և ի վերջս կենաց հասեալ, որ ի նուազեալ զարուբեան անդամոցն և ի պակասմանէ զգայարանացն հեծէ և ցաւի: Այսպէս ծերացեալ աշխարհի, նուազեաց ամենայն ազդումն բարոյ և յանախեալ բազմացան բորբոքումն շարեաց, և տապեալ տառապէր տխրեալ տիեզերաց մասունք անդամոց: Եւ որպէս կին ի ծննդական երկունս հասեալ յառաջ բերել զմանուկն ի լոյս երկիր, կսկծելի և սրագոյն ցաւոց հասեալ, փութացուցանեն զծնունդ մանկանն, այսպէս և աշխարհս այս, յորում ծնաւ և սնաւ և ունի զվեց ընդ ինքեամբ իբրև մայր զմանուկ ի փորի կենաւ և մահուամբ, զի ծնցի ի հանդերձեալ աշխարհին: Եւ արդ, ցաւէ և երկնէ և տագնապի, մինչև ծնանի: Այլ և ծփի ծովանման (449թ) և ալեկոծէ զմարդիկ, որք ի նաւ մարմնոյս ունին զգանձս հոգոյ և հեպին ի նաւահանգիստն վերին:

Արդ, յայսմ ժամանակի ցաւէր աշխարհ իբրև զծեր և երկնէր որպէս զմայր և ծփէր որպէս զծով: Եւ առաւել ևս ազգք փրիստնէից և եկեղեցի Քրիստոսի ամբոխեալ խոռվէր իբրև ի հողմոց շնչմանէ յանարինացն յարուցմանէ, որով և **երկիրս Հայոց**, որ ի նահանգիս **Կիլիկոյ**, որում տիրէին փրիստոսապսակք թագաւորք, սերեալք ի **ըմբարինացն** զարմէ, և իշխանք գաւառատէրք ի նոցունց ազգակցութենէ, սաստիկ և անհնարին նեղութեամբ վշտանայր **յեզիպտական** ազգէն, ի գազանամիտ և գոռոզաբարու սուլտանացն, որք տիրէին անդ յաւուրս մերոյ ժամանակաց, որք և մաշեալ սպառեցին և ւաւերեալ ջնջեցին զծովեզերեա աշխարհին, յորում բնակեալ էին արիական ազգն **Ֆռանգաց**, զմեծն **Անտիոք**, զգարմանահրաշն և զգեղեցկաշէնն, որ ընդ տէրութեամբ բրնձին, զոր կործանեալ ի հիմանց, (450ա) ւաւերեաց **Ֆնտովստար** սուլթանն, որ անուանէր **Մելիք Տահր**, ի թուին ԶԺԷ (1268), յաւուր շաբաթու, ի Ծաղկազարդին, և զԳ (3) պարսպեանն **Տրապալիս**, զոր առ **Ալֆի** սուլթանն **Մելիք Մնսուր** ի թուին ԶԼԸ (1289), և զփառաւորն **Պաղոմիդէ**, որ նա ինքն **Աֆայ**, որ էր տուն իշխանութեան Դամիլուն և Ոսպէթալի²⁹, և այլոց անունաւոր իշխանաց շինեալ բարձրագոյն պրեմալ և հաստահիմ պարսպաւ և գեղեցկայարմար տանարաւ, զոր կործանեալ տապալեաց անարէն որդին **Աֆլէ Մելիք Աշրաֆն** ի թուին ԶԽ (1291), ի մայիս ԺԸ (18):

Որ և սաստկագոյն քան զայլ գոռոզսն գոռայր իբրև զապմ կարկտածին ի վերայ մերոյ աշխարհիս և ծանրացոյց առաւել սաստկութեամբ զպահանջումն հարկին և զեզերային գաւառսն մեր բոլոր սահմանաւ ի ձեռն սրիկայից արանց Արաբացոց և Թուրքաց գերէր միշտ և ւաւերէր և անբնակ առնէր

²⁹ Խոսքը տանարականների (Templiers) և Հիվանդախնամների (Hospitaliers) միաբանությունների մասին է:

և, ըստ բարեկացոց բռնաորին, ձևացեալ երկնահաս ծառոյն, որ այնքան բարձրացեալ նա մինչ յերկնամասն **Երուսաղէմ** ֆաղաֆն Աստուծոյ հասեալ առ զնա և գերեաց (450բ) զսպասս սրբութեան տաճարին Աստուծոյ: Նմանապէս և սա այնքան ներողութեամբն Աստուծոյ և յանախութեամբ մերոցն մեղաց զաւրացեալ, մինչ զի առ զաթոռ հայրապետութեանն Հայոց **ԳԿԱյն Հռոմայական**, յորում էր և Աջ մերոյ **Սրբոյ Լուսատրչին**, և առաքելական և մարտիրոսական նշխարք և սրբութիւնք անթիւք և կտակարանք աստուածային գրոց գանձեալ բազմութեամբ, զոր և անհուն զաւրաւ և բազմաձեռն պատերազմողաւ և նորագործ մեքենայից հնարարութեամբ պատեալ պաշարեաց սղարեալ բարանաւ ի վերուստ, և ֆարափոր ծակամտաւ նաղմելով նեղեալ ի ներհուստ, առ զաստուածաշէնն զայն և զհրաշալի դղեակն վայելչագեղ ի թուին **ՉԽԱ** (1292) յունիս **ԻԸ** (28), գերեաց զտէրն և զհայրն մեր հոգևոր զկաթողիկոսն ամենայն Հայոց զտէր **Ստեփանոս**, եպիսկոպոսաւ և վարդապետաւ, ֆահանայիւք և անհամար ֆրիստոնէիք: Եւ սպառեալ զազգն ֆրիստոնէից և բնակեցոյց ի հայրապետանոցին և ի գեղեցկապաճոյն տաճարին՝ զուրացողսն (451ա) Քրիստոսի: Եւ եղև այն սուգ մեծ ամենայն եկեղեցեաց, մանաւանդ ազգին Հայոց, որք կրեցին զկսկիծն ողորմելի և զաղէտն աշխարհանաց:

Արդ, զի յայսմ ժամանակի այսպիսի նեղութիւնք ժամանեալ հասեալ ունէր զեկեղեցի Քրիստոսի և զի որպէս ասացաւ յառաջ ֆան զայս, **ՉԼԸ** (1289) թուին, եղև աւերումն **Տրապալստ՝ յԱլֆէ**: Եւ վասն այսորիկ յաճախեաց ան և երկիւղ ի վերայ ամենայն ֆաղաֆաց ծովեգերեայց: Վասն որոյ և ես **Հեթում**, մտախոհ եղեալ զտանել տեղի ամրոցի և ապաստանի զգուշանալ յանարինացն սրոյ մերոցն ֆրիստոնէից և տենչացեալ ցանկացայ գեղեցկադիր այսմ կղզոյս որ հանդէպ մերոյ աստուածապահ ամրոցիս և յարմարեալ շինեցի զսա բազում ծախիւք և մեծ փափագանաւ և վասն բնակչացն միսիթարութեան շինեցի տաճար Աստուծոյ և տուն աղաթից զսուրբ եկեղեցիս, որ ի մէջ գեղեցկաշէն ամրոցի բերդիս, յորում և ի պէտս լուսաւորութեան հոգոց որպէս ծառն կենաց ի մէջ դրախտին և Աւետարան Քրիստոսի պիտոյ էր այսմ (451բ) դրախտի եկեղեցոյ, զոր և ետու գրել ի լուսաւորութիւն հոգոց ի տաճարս յայս աղաթողաց և յիշատակ բարեաց ինձ և իմոցն յապագայս ժամանակաց և փրկութիւն հոգոյ իմոյ ի հանդերձեալ կեանսն յարդարադատ անեղ ատենին Քրիստոսի: Եւ եղև աւարտումն գրութեան սորա ի թուին **ՉԽԲ** (1293), ի ժամանակի, յորում ունէր զաթոռ թագաւորութեան **Երկրիս Հայոց** արինապահ և առաքինասէր և եկեղեցագարդ պարուն ամենայն Հայոց **Հեթում՝** որդի **Ատնի** բարեպաշտի, որ միսիթարութիւն էր մեզ ի վշտաբեր ժամանակիս սրբասնունդ եղբարքք իւրով:

Արդ, ես՝ **Հեթում**, մեղուցեալ ծառայ Քրիստոսի, աղաչեմ և աղերսեմ և պաղատիմ սիրովն Քրիստոսի առ սուրբ եկեղեցիս յիշել զիս բարեմիտ կամամաբ և զսիրելի որդեակսն իմ՝ զանդրանիկն՝ **Աւշին** և **Գոստանդին** և **Ղևոն** և զոյրս սոցա՝ **զըմիթա**, և զամուսին իմ **զԶապլուն** և ողորմութիւն հայցել ի Քրիստոսէ մեզ և թողութիւն յանցանաց մեզ և ծնաւոց մերոց և եղբարց և համայնց զարմից, զի և ձեզ ողորմեսցի (452ա) ամենառատ պարգևաց տուողն Աստուած, և նմա փառք յամենայն արարածոց իւրոց:

Աղաչեմ և ես անիմաստ այրս և թերավարժս յուսումն գրչութեան **Վասիլ** գրող սորա և կազմող յիշել ի մեղաց թողութիւն զիս և զծնողսն իմ և զեղբարս:

Այլ և զհոգևոր եղբայրն իմ զշնորհաներկ գրիչն **Վասիլ**, մականունն **Երկինք**, որ զանազան երանգաբ և ոսկիազած ծաղկաբ զարդարեաց զսա, մի մոռանայք յաղապից:

13

ԳԱԳԻԿ-ՀԵԹՈՒՄԵԱՆ ԲԺՇԿԱՐԱՆ

Վենետիկ 1281, *Յուցակ Վենետիկի*, հ. Ը, էջ 720-722³⁰

ՉԽԳ

1294

Գրիչ՝ **Վարդ Մրաիշցի**
Ստացող՝ **Հեթում Կոռիկոսցի**
Վայր՝ **(Կիլիկիա)**

ա

Էջ 14 Զթագատրագն այր զֆրիստոսապաշտ իոնիեմ ես ֆաջ ի արանց պարոն զբարեհամբաւն **Հեթում**, տէր **Կոռիկոսոյ** յիշեսչիք ի Քրիստոս, որ Քրիստոսի եք վիճակեալք, որոյ հրամանաւ սկիզբն արարի գրութեան յոքնահաննար ես յամենայնի պիտանացու ես հարկատու տառիս Բժշկարանի՝ ես ապիկար ծերունիս **Վարդ Մրաիշցի**:

Սկիզբնս ի թուին հայոց ՉԽԳ (1294), յամսեան յունարի ի ԻԸ (28)-ն:

³⁰ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ը, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1998, էջ 709-722: Երկի բնագրային վերնագիրն է՝ «Բժշկարան, զոր փոխած է ի Տանիկ լեզուէ ի Հայս, ի ժամանակս յաղթող թագաւորին Հայոց Գագկայ» (անդ, էջ 710):

Բ

Էջ 229 Որ բարձեր զգաս հոգաց եւ մարմնոց հաստացելոց քոց, Քրիստոս Աստուած, բժշկեա՛ զհոգոյ եւ զմարմնոյ հիւանդութիւն ծառաի քո **Հեթմոյ**, տեսոն **Կօռիկօսոյ**, ստացողի բժշկարանիս, եւ պահեա՛ զնա իւրովն ամենեւում անփորձ կրկին կենդանութեամբ կենդանովն եւ անկենդանեան զերկախանչիւսն ըստ քումդ հանոյից կառավարելով, զի մնալով նշխար յարհնեալ նահապետէն, արհնեա ծառանգ թոնն անփոփոխելի ունելով իւրայօքն՝ ըստ Աքրահամու, ի փառս քո, ընդ Հաւր եւ Սուրբ Հոգոյն արհնեալդ յաիտեանս:

Գ

Էջ 396 Զստացող բժշկարանիս զմեծ սեւաստիօս եւ թագաւորացն եւ բարեհամբաւ զայրն զպարոն **Հեթում**, տեր **Կօռիկօսոյ**, եւ զիւսն ամենայն՝ զկենդանիս եւ զհանգուցեալս, յիշեսջիք ողորմութեանն Աստուծոյ արժանանալ, եւ որպէս յիշէի՝ եւ ձեզ շնորհեսցի:

Գրեցաւ ի թուին ԶԽԳ (1294) ի թագ(աւորութեանն) **Հեթմոյ** եւ ի հայր(աւետարեանն) **Գրիգորի**:

14

ԺՈՂՈՎԱԾՈՅ

Վենետիկ 1135, Յուցակ Վենետիկի, հ. է, էջ 129

ԶԽԶ

1297

Ստացող՝ **Ստեփաննոս արքեպիսկոպոս [Օրբէեան]**
Վայր՝ **(Սիւնիք)**

Ա

78բ Զարհիական եւ զերշանիկ մեծ բարունապետն, զհաստարիւմ ծառայն Աստուծոյ, զգահագլուխ աստուածապահ **Սիւնեաց** գաւեր **Ստեփաննոս**, շնորհիւն Յիսուսի Քրիստոսի արհեպիսկոպոս, յիշեսջիք ի մաքրափայլ յաղաթս ձեր առաջի զենելոյն Քրիստոսի, ով սուրբ ընթերցողք, եւ դում յիշեալ լիջիք ի Տեանէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, ամէն³¹:

³¹ Ձեռագրի գլխավոր հիշատակարանը դիտավորությամբ կրտել-հանել է մի սարկավագ, որի մասին գրում է ձեռագրի հետագայի ստացողը. «...ումն սարկավագ Կարապետ անուամբ, եկն էառ ի տանէ մերմէ կարդալոյ աղագաւ, եւ ես ոչ էի անդ, տարեալ կտրատէ գլխատակարանն, իբր թէ ոչ գիտասցին»։ Ձեռագրի գրասեր տերը, որն անունը չի նշել, փորձել է հիշողությամբ վերականգնել հիշատակարանում եղած թվականը. «որ էր գրեալ այսպէս. ի թվականութեանս Հայոց ՆԽԶ (997)»: Վենետիկի ձեռագրացուցակի հրատարակիչն իրավացիորեն

Բ

234բ Զմեղաւ դատապարտեալ ծառայս ամենայն ծառայից Աստուծոյ աղաչեմ խնդրել ի Տեառնէ զթողութիւն մեղաց:

15

ԳԻՐՔ ՊԻՏՈՅԻՑ

Վենետիկ 1169, Յուցակ Վենետիկի, հ. է, էջ 532

ԶԽԷ

1298

Գրիչ՝ **Յոհաննէս**
Վայր՝ **Գլաձոր**

225բ Փառք եռանձնեայ եւ միոյ աստուածութեանն որ արժանացոյց զանարժանս հասանել ի վերջին գիծ տառիս Պիտոյից, ի թուականի հայկազեանս տոհմի ԶԽԷ (1298), ի դառն եւ ի դժնեայ ժամանակիս, յորում իստագոյն տիրէր լուծ այլաստիցն ի վերա ֆրիստոնէից, եւս առաւել ի վերայ շինուածոց եկեղեցեաց, զորս բազումս ֆակեալ եւ աւար հարեալ անպիտանացուցին, յորում զանցս աղիտիցն ոչ կարացից մի ըստ միոջէ ընդ գրով արկանել:

Արդ գրեցաւ սա ի գաւառիս **Վայոց ձոր**, ի վանս **Գլաձոր**, ընդ հովանեաւ **Սուրբ Նախավկայիս**, ի վարժապետութեան **Եսայեայ**, առն հեզոյ եւ խաղա(ղա)րարի, ձեռամբ յոքնամեղ ծառայիս **Յոհաննիսի** աշակերտի բանի:

Արդ որք հանդիպիք այս մատենի, յիշեալիք ի մահուր յաղօթս ձեր զնախասացեալ բարունապետն մեր, ընդ նոյն եւ զիս՝ զանպիտան գծողս եւ զհամամիտ եղբայրս իմ հոգեւոր զհամանուն **զՍտեփանոսս** եւ **զՎարդան**, եւ զայլ ամենիսեան մի ըստ միոջէ. զծնողս եւ զվարդապետն իմ եւ զամենայն երախտաւորս: Եւս առաւել զդեռաբողբոջ ծաղիկն եկեղեցոյ **զՈվաննէս** զմականունն **Օրբէլ**, զհամակն մշտափայլ զուարնացեալ ի յիմաստս բանից: Եւ յիշողացդ եւ յիշելեացս ողորմութիւն շնորհեսցէ ողորմածն յամենայնի եւ նմա փառք³²:

նկատում է, որ սկզբնագրում պետք է եղած լինի ԶԽԶ (1297), որը համապատասխանում է Ստեփանոս Օրբելյանի ժամանակին (տե՛ս Մայր ջուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխթարեանց ի Վենետիկ, հ. է, էջ 127, 129):

³² ԺԳ դարի հիշատակարանների ժողովածուում, ըստ Ղ. Փիրղալեմյանի «Նշխարքի», տեղ են գտել այս հիշատակարանի թվականը և երկրորդ պարբերությունը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 825):

KAREN MATEVOSYAN

**COLOPHONS FROM FOURTEEN MANUSCRIPTS
OF THE 13TH CENTURY****(Supplement to the Collection of Colophons of the 13th Century)**

Keywords: Manuscript, colophon, Haghbat, Gladzor, Cilicia, Sis, Drazark, Mlich, Skevra.

In 1984, Artashes Matevosyan, a research fellow at the Matenadaran, published a separate volume containing over a thousand colophons of 13th-century Armenian manuscripts, collected from 832 manuscripts. In subsequent years, new colophons have appeared (in the collections of Holy Etchmiadzin, Jerusalem and Venice), which are presented in this publication. All colophons are dated (1203, 1221, 1222, 1223, 1237, 1240, 1252, 1285, 1292, 1293, 1294, 1297 and 1298). They are collected from 14 manuscripts and mainly relate to the creation of the manuscripts. Together with small notes, a total of 47 colophons are published.

Most of the colophons were written in Cilicia, in the city of Sis, the monasteries of Drazark, Skevra, Mlich and elsewhere; there is also one colophon from each of the monasteries of Haghpat and Gladzor. The colophons mention the names of numerous secular and ecclesiastical figures, monasteries and various settlements. They also contain interesting information about some historical events.

КАРЕН МАТЕВОСЯН

**ПАМЯТНЫЕ ЗАПИСИ ЧЕТЫРНАДЦАТИ
РУКОПИСЕЙ XIII ВЕКА****(дополнение к сборнику памятных записей XIII века)**

Ключевые слова: Рукопись, памятная запись, Ахпат, Гладзор, Киликия, Сис, Дразарк, Млич, Скевра.

В 1984 году научный сотрудник Матенадарана Арташес Матевосян опубликовал отдельный том, содержащий более тысячи памятных записей 832 армянских рукописей XIII века. В последующие годы были обнаружены новые памятные записи (в собраниях Святого Эчмиадзина, Иерусалима и Венеции), которые представлены в этой публикации. Все памятные записи датированы

(1203, 1221, 1222, 1223, 1237, 1240, 1252, 1285, 1292, 1293, 1294, 1297, 1298гг.). Они собраны из 14 рукописей и в основном относятся к обстоятельствам их создания. Вместе с небольшими пометками их число составляет 47 памятных записей.

Большинство памятных записей написаны в Киликии, в городе Сис, монастырях Дразарк, Скевра, Млич и в других местах, но есть и по одной памятной записи из монастырей Ахпат и Гладзор. В них упоминаются имена многочисленных светских и церковных деятелей, монастырей и различных поселений. В них также содержатся интересные сведения о некоторых исторических событиях.